

# ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

1884. ԱՊՐԻԼ

№ 2

ԱՅՍԱԶԻՆ ՏԱՐԻ

ԻՌՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

	Երջւ.
1. Բէլգիկէ մեծ մանկավարժ Դեանկովէնի մտքերը . . . . .	65
2. Գերմանական դաս մարմնամարզութեան վերա . . . . .	68
3. Գաղղցնէր զարգայելու, դպրոցական պատ- կերներէ և աւհասարակ աշակերտներէ ճաշակը դարգացնելու մասին . . . . .	76
4. Ս. Դրբի աշխարհագրութեան դատերի մասին . . . . .	95
5. Եւետարանի աշակերտի (քանասա.) . . . . .	100
6. Փորձնական դաս սնունդի մասին Փրան- սական դպրոցում . . . . .	101
7. Եվրոպացիներէ դպրոցավարութիւն . . . . .	105
8. Յիշատակարան . . . . .	114
9. Իմրագրութեան պատասխանները . . . . .	128
10. Մանուցմունք կաղծի 2 և 4 երեսներում:	

ԹԻՖԼԻՍ

ՅՈՒՂԱՆՆԻՍ ԻՐԱՏԻՐՈՒՄԵԱՆԻ ՏՊԱՐԱՆ

1884



# ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԴԻՐ

Խրատան շինութիւնը տեւորը 2

Св. Эчмιάдинъ,

Թերթի Տարին 10 տեւոր:

Редакции МАНРАВАРЖА-

Տարեկան գինը 3 ման.

НОЦЪ.

1884. ԱՊՐԻԼ

№ 2

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Faisons notre devoir, le  
reste est vanité.

(Մենք մեր պարտքը կատարենք,  
ինչպէս որ ունայնութիւն է:)

ԲՆՈՒՄՆԻ ԱՆԾ ՄԱՆԿԱՎԱՐԺ ԴԻՍԷՐՎԷԳԻ

ՄՏՔԵՐ:

Ա. ՌԻՍՈՒՅԻԶՆԵՐԳ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՕՐԸԳԻՐՆԵՐ:

Ուսուցիչներն ընկերութիւնները և ժողովները  
գեղեցիկ և կարևոր մեջոցներ են ուսուցչական  
դասը կրթելու և աղետաւանելու, և բարձր պահե-  
լու ուսուցչական կոչման գթօշակը: Որքան աւելի  
տեսնեն միմեանց ուսուցիչները և հաղորդեն մի-  
մեանց իրանց մտքերը, այնքան աւելի յառաջա-  
դէմ կլինին, աւելի յաւ հասկանան իրանց սրտ-  
տօնը, և տաւել քօհ կլինին իրանց վիճակից:  
Գրքերը չեն կարօղ ժողաւրդին այն ազատ խօսքն  
ու գրօյցը, որ նորա կարօղ են ունենալ իրանց  
պաշտօնակիցներէ հետ:

Որքան ուսուցիչներ կան մեր երկրում, որոնք երբէք չեն կարդում մանկավարժական օրագիր: Պիտի խոստովանեն, որ իմ փորձերս այս կէտի վերաբերմամբ շատ յաճախ յուզել են հոգիս ու միտքս:

Անկեղծաբար խօսելով, ես անբաղդուծիւն եմ համարում դպրոցական պաշտօնեաների այս անընթեքցասիրուծիւնը: Այն, սա անբաղդուծիւն է մի երկրի համար, երբ ուսուցիչները չեն պահպանում այն հրատարակուծիւնը, որը ստեղծվել է յափկապէս իրանց օգտի համար: Եթէ օրագիրը նոցա ցանկութեան, նոցա հայեացքներին չէ համապատասխանում, մի՞թէ չեն կարօղ նօքա օգնուծիւն հասնել նորան ցանկալի ուղղուծիւնը տալու համար: Պիտի չլինին այնպիսի ուսուցիչներ, որոնք անընդունակ լինին իրանց մտածմունքի և փորձառուծիւնների հետևանքները պարունակող յօդուածներ գրելու: Բայց որքան ուսուցիչներ կան, որոնք չեն մտածում և ոչինչ կարելորուծիւն չեն զգում այդ մասին: Չեմ կարօղ չկրկնել. սա կատարեալ անբաղդուծիւն է:

Բ. ՈՒՍՈՒՑՁԻ ՅՍՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

Ուսուցչի համար առողջ լմաստի մի նշանակեցը առաւել լաւ գործիք է քան թէ գլխում առանց կարգի ամբարված տեղեկուծիւնների մեծ քանակուծիւնը: (Ինտէլլիգից առաջ ժդ. դարի Փրանսացի մատենագիր Մօնտէնը ասումէր աշակերտների վերաբերմամբ. «Ես աւելի կցանկամ որ

իմ աշակերտն ունենար կանոնարար մտածող գլուխ,  
քան թէ անկանոնարար լցված գլուխ»):

Իւր պաշտօնի բարձրութեան համեմատ լինե-  
լու համար հարկաւոր է, որ ուսուցիչը նախ քաջ  
իմանայ իւր աւանդած նիւթը: Երկրորդ, որ նա  
կարողանայ հետեւողաբար և նկատողական կեր-  
պով աւանդել նոյն նիւթը: Երրորդ, որ նա ունե-  
նայ սէք և համակրութիւն առ աշակերտները, որ  
միայն կարող է ծառայեցնել իւր ձգտմունքը, իւր  
ցանկութիւնները աշակերտների օգտին: Այս յատ-  
կութիւնները միասին խմբված լու ուսուցիչ են  
կազմում: Առաջին յատկութիւնը հեշտ է ճանա-  
չել. դա քննութեան գործ է: Երկրորդը նոյնպէս  
հեշտութեամբ կճանաչվի. դաս ասել տալով ու-  
սուցչին դասարանում: Երրորդը երևում է միայն  
գործնական սլարապմունքի միջոցին: Բայց փոր-  
ձառու դատաւորը հեշտութեամբ կճանաչէ այս  
երրորդ յատկութեան գոյութիւնը բանաւոր, գրա-  
ւոր և գործնական քննութենից, որին կարող է  
ենթարկել ուսուցչացուին:

Գ. ԻՆՉՊԼԱ ՊԷՏԻ Է ԱՇԽԱՏԷ ՈՒՍՈՒՑԻՉԸ ԻՒՐ

ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ:

Երկտասարդ ուսուցիչներին, որոնք կցանկան  
իրանք իրանց զարգացնել, հետևեալ խորհուրդ-  
ները կտամ.

ա. Ուսումնասիրեցէք ձեր կոչման վերաբերված  
հեղինակութիւնները, որ գրել են հանրածանօթ,  
փորձառու և ընդունակ մարդիկ: Բայց օրագիր-

ների և հանրագիտութիւնների մէջ պէտք է ուսումնասիրել, այլ մասնագիտական աշխատութիւնների մէջ, որտեղ նրաթը հիմնովին մշակված է, և ոչ թէ հարեանցի կերպով խօսված, ինչպէս որ հանրագիտութիւնների և օրագրերների մէջ էր. Ասումնասիրեցէք միանուազ միայն մի ճիւղ: Մի բաւականանաք մակերևոյթով և «երջարար» բառերով, այլ այնպէս արէք, որ հեղինակութեան մէջ պայտենակված գաղափարները, մտքերը, բնագրի կայտարեալ և ամբողջ հասկացողութիւնը ձեռք բերէք: Քաղուածներ արէք ձեր կարգացածներից, կարգացէք զբիշը ձեռին: Արկին կարգացէք գլխաւոր հեղինակութիւնները, որոնք ձեր ուսումնասիրութեան առարկայ են կազմում: Այնպէս իզմանդարացաւ մայրամեջը: Աեզ այնպիսի բնութեամբներ ընտրեցէք, որոնք միևնոյն ճաշակն ունենան և միևնոյն ճիւղ ընտրած լինին ուսումնասիրելու: Միայն միտարին հետազօտելով, լիճելով և գտնվածը գործադրելով, ձեռք ձեռքի տուած, հասնում են զարգացմանը: Ձեր աւանդած առարկաները պիտի լինին ձեր հոգացողութեան և ձեր մտածմունքի գլխաւոր առարկան:

Մայրամեջի գծուցումը (Գերտեհեհե):

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԱՍ ՄԱՐՄՆԱՄԱՐՁՈՒԹԵԱՆ  
 ՎԵՐԱ:  
 Բէալինի համալսարանի պրօֆէսոր Պաուլզենը

անցեալ 1883 թ. նոյեմբերի 20-ին, եւ մանկա-  
վարժութեան դասընթացում շատ հետաքրքիր  
դաս խօսեց մարմնամարզութեան վերա: Այս դասի  
զուգադիպութիւնը Փրանսական մարմնամարզների  
առաջին հանդիսաւոր ժողովի հետ Փարիզում, ժա-  
մանակակից նշանակութիւն է տալիս գերմանացի  
պրօֆէսորի խօսքին: Նորա յայտնած քննադա-  
տութիւններն այնքան բարձր արժէք ունին և  
ընդհանրապէս ազգային կրթութեան ամենանշա-  
նաւոր խնդիրներից մինն վերա այնքան ընդար-  
ձակ հայեացք են ձգում, որ հարկաւոր է հոցա  
վերա լրջմիտ ուշադրութիւն հրաւիրել: Ահա այն  
դասի համառօտագրութիւնը:

«Էին ժամանակում մարմնամարզութիւնը կրթ-  
թութեան էական մասն էր: Յայտնի է, որ կրթ-  
թութիւնը Յոյներն մէջ երկու մասերից էր բաղ-  
կանում: Առաջինը երաժշտութիւնն էր, այսինքն  
մտքի և ճաշակի ազատ կրթութիւն: Երկրորդը  
մարմնամարզութիւնն էր: Եւ պէտք չէ կարծել  
թէ երկրորդն առաջնից պակաս նշանակութիւն  
ունէր: Երաժշտութեան ուսուցմամբ պարասումէ-  
ին մասնաւոր անձներ: Նորա համար մեր այժ-  
մեան դպրոցների նման հասարակական դպրոց-  
ներ չկային: Ընդհակառակն, գիմնագիծներ (մար-  
մնամարզարաններ) տէրութիւնն էր պահպանում:  
Գիմնագիծը հասարակական կեանքի կեդրոնա-  
տեղ էր: Այնտեղ էին գալիս ծերունիները տեսնե-  
լու, խրախուսելու, նախանձով շարժելու և ու-  
սուցանելու երիտասարդներին: Այնտեղ էր գնում  
Սօկրատը ունկնդիրներ և աշակերտներ որոնելու:

Սա մի նեղ տարածութիւն չէր ամենատեսակ գործիքներով փակված և լցված, ինչպէս այժմ, այլ մի մեծ ազատ հրապարակ էր, երիտասարդները կրթութեան ճշմարիտ ապարկէզ:

Մարմնամարզութիւնը դեռևս մի ուրիշ արժանաւորութիւն և մի ուրիշ հասարակական պաշտօն ունէր: Նա գորաւոր կապ էր Յունաստանի բաժանված բոլոր ցեղերը համար: Նա էր հրաւիրում իւր հանդիսաւոր ասներին բոլոր այն նախանձաւոր ժողովուրդներին, որոնք պարբերաբար և եղբայրաբար ժողովումէին Օլիմպիական դաշտավայրերում: Մարմնամարզութիւնը բովանդակումէր չորս կամ հինգ դանազան կրթութիւններ.

1. Արշաւանք, արագ արշաւանք կամ երկարատև արշաւանք, որոնց նպատակը և վախճաններն ինքն ըստ ինքեան բաւական պարզ են:

2. Հռչակաւոր սրայէտը, անուևով շայտի դատէմարտութիւն, որը ճշմարիտ պատրաստութիւն էր առ զինուորական կոչումն, և պիտի դարձացնէր երիտասարդ քաղաքացու Փիզիքական ընդունակութիւնը, քաջասրտութիւնը, նախանձաւորութիւնը և վստահութիւնը:

3. Ուսոստումն, որը տալիս էր միանգամայն թեթևութիւն, աներկեանութիւն և վճռողականութիւն:

4. Սկուսոակը (փայտեց կամ մետաղեց) ձգելով երիտասարդները կրթումէին մարմնի վերին մասները և աչքի ճշգրտութիւնը:

5. Վերջապէս ձիու դորձածութիւն և կառքի կառավարութիւն:

Այս բոլորը ոչ թէ միայն Ֆիզիքսիան յափշտա-  
կումն էր, այլ այնպիսի վարժութիւնների ամբող-  
ջութիւնն էր, որոնք իրանց բնաւորութեամբ կըր-  
թումէին թէ մարմինը և թէ հոգին:

Քրիստոնէութեան ոգին դէմընդէմ հակառակ է  
յունական գիմնագիտի ազդեցութեանը: Յոյնի  
համար, ինչպէս և քրիստոնէի համար, կեանքն,  
այն, պատերազմ է, բայց Յոյնի համար այնպիսի  
պատերազմ է, որի դէմ նա կ'ամենումէ գեղեցիկ  
կերպով մարտնչել: Քրիստոնէի համար տխուր և  
ծանր կռիւ է, և իսկական կեանքի մութ և ան-  
հրաժեշտ նախապատրաստութիւն: Ճշմարիտն ա-  
սած, քրիստոնեան միմիայն հոգու մասին է  
հոգում, մարմինն նայում է երկբայելով և նորան  
դատված կամ դատապարտված համարելով: Իսկ  
մարմնամարզութիւնը յարգանք է առ մարմինն:  
Քրիստոնէութիւնը և մարմնամարզութիւնը կա-  
տարելիապէս երկու հակառակ ծայրեր են: Յունա-  
կան կատարելտիպը չէր քիւլէսն էր, որը միա-  
ւորում է ոյժը քաջասրտութեան հետ, իրան իշ-  
խելով և գոսելով, և թողնում է նազելի վայել-  
չութիւնների դշխոյ գեղեցիկ Ափրոզիտէին (Աօտ-  
դեկին) իմաստուն և գործունեայ Մինէրվային (Նա-  
նէին) հետևելու համար: Քրիստոնէի կատարելա-  
տիպն է համբերութեամբ և տոկունութեամբ նե-  
ղութիւններ կրել, առանց տրտնջելու, առանց  
ընդդիմանալու, խղիարհ, փառաբանօղ և տառա-  
պեալ սրտով:

Այսպիսի ուղղութիւնը նպաստուոր է մարմնա-  
մարզութեանը IV և V դարերից յետոյ երբ քրիս-

տոնէութիւնը յաղթումէ, հին կրթութիւնը ան-  
հետանումէ:

Ի հարկէ պատմական հանգամանքները և կար-  
ելիքները մի բան փրկում են անկման թշուառու-  
թենից: Ասպետականի կրթութեան մէջ մի տե-  
սակ մարմնամարզութիւնը դիտաւոր տարրերից  
մինն էր: Բայց կրօնը բոլորովին ուրիշ տեղ է  
տեսնում գոյութեան զաղտիւարը և օրինակը: Նո-  
րա հասկացողութիւնը և հայեացքը կեանքի մասին  
ճշդութեամբ արտայայտում է կղերը, որը  
գէնքեր չունի և չէ կարող պատերազմել: Ան կղե-  
րը կրթութիւն է տարածում: Մեր ներկայ դպրոց-  
ները ծագում են և դեռ նոր են ազատվում միջ-  
նադարեան կղերական դպրոցներից: Այն ժամա-  
նակի նոյն ինքն աշակերտները կիսով չափ հո-  
գեւորական են: Մարմնի կրթութիւնները մասին  
ինգլիք չկայ: Մարմնամարզութիւնը նպաստում է  
ամբարտանաւանութեանը և հպարտութեանը, սա-  
փտանգաւոր է: Նոյնիսկ Թրանկէի, գերմանացի  
հռչակաւոր մանկավարժի (1663—1727) դպրոց-  
ների կարգապահութիւնը, որտեղ քրիստոնէական  
ոգին բուսական մեծ էր, մի վանքին սուելի կյար-  
մարէր քան թէ՛ դպրոցին: Լուսաւորութեան դարի  
հետ սկսվում է կերպարանափոխութիւն: Ռուսոն  
կամենում է պարզապէս մանուկի մարմնական  
ներգործականութիւնը և կեանքը զարթեցնել:  
Նա մանուկին ուստոստել է տալիս, վազել է տալիս  
երբև ժողովի Յոյնին: XVIII դարի Ֆիլանտրօպի-  
նիստ կոչված գերմանացի մանկավարժները փորձ  
արին իրագործելու իրանց ուսումնարաններում

Ռուսոի քարոզած վերադարձն առ բնութիւնը, և առաջին անգամ այնտեղ են երևում նոր պատմութեան մէջ մարմնի կրթութիւնները և խաղերը: Մանուկների հագուստն ևս պրօզրամին համեմատ է: Մարմնամարզարանը (Turnplatz) նորից ծնվում է դպրոցում: XIX դարի սկզբում Փերմանիայում հիանալի եռանդ է շարժում քաղաքական անցքերի պատճառով: Եանը հայրենասիրութեան և մարմնամարզութեան դաշն է կապում և մարմնամարզութիւնը նախապատրաստական ուսում է շինում պատերազմի համար: Երիտասարդների մէջ մի ճշմարիտ յամիչտակութիւն է սիրում դէպի մարմնական վարժութիւնները: Այնուհետև մարմնամարզութիւնը շատ ընդարձակվեցաւ Փերմանիայում: 1844 թ. պրուսական կառավարութիւնը պաշտօնապէս նուիրագործեց նորան իւր պրօզրամներում, և սորանից նոր առաջադիմութիւն առաջացաւ: Սակայն մարմնամարզութիւնը դեռ աւելի մեծ ապագայ ունի քան թէ անցեալ, և հասարակական կեանքում նա շատ աւելի նշանաւոր գործ ունի կատարելու քան թէ ինչ որ այսօր կարծում են:

Ազգային պաշտպանութեան հոգացողութիւնը ամեն ազգերի մէջ օրէցօր մեծացող խնդիր է: Այս նպատակով առաջ եկող բեռնակրութիւնները հետըզհետէ ծանրանում են և սպառնում են մի օր անտանելի դառնալու: Արդէն դժուարին է իւրաքանչիւր անհատի համար քանի մի տարիներ ծառայել խաղաղութեան միջոցին: Սա ժամանակի և աշխատութեան մեծ կորուստ է: Արուես-

տաւորներն Համեմատաբար պակաս են կորցնում: Իսկ բարձր դասերի քաղաքացիների Համար և մանաւանդ ազատ կոչման անձներն, ղեղարհետազէտներն, գիտնականներն, ուսուցիչներն և ուրիշներն Համար, այս պարտաւորութիւնը ծանր և տաղտկալի է: Միւս կողմից Անգլիան, Ամէրիկան ազատ են այս աւերող Հարկից, և հետու չէ ժամանակը, երբ այս բեռով ծանրաբեռնված Հին Ելջօպան չի կարողանայ տնտեսական մրցումն շարունակել: Ուստի ստիպված կլինին հնարաւոր միջոցներ որոնել կերպարանափոխելու պինուրական ծառայութիւնը, որով այսօր գինուորներ են պատրաստում: Միակ հնարաւոր լուծումն այն է, որ երիտասարդն առաջագոյն ծանօթանայ այն ամեն բանի հետ, ինչ որ սպասումէ և պահանջումէ նորանից գործը:

Այս եզրակացութիւնը նորանով աւելի իրաւացի է, որ մարդս քսանամեայ Հասակից առաջ է հասնում իւր ամենաբարձր աստիճանի չարմարութեանը և իւր ամենակատարեալ ընդունակութեանը մարմնամարզութեան մարմնական կրթութիւնների Համար: Յետոյ բնականաբար այս նախապատրաստութիւնները կըարձենն յօգուտ ազգային պաշտպանութեան: Արիչ ազգերը Գերմանիայից առաջընթաց եղան այս ճանապարհում (օրինակ Ֆրանսիան իւր դարոցական զօրագնդերով): Նա պիտի հեռուի նոցա այս գործում: Ազգային պաշտպանութեան հօգսը, ճշմարիտ է, կիերպարանափոխէ մեր մարմնամարզութիւնը: Մեր կրթութիւնները շատ բարձր, թանկագին և աւելորդա-

բար ներացրած են: Ո՛րքան պարզ և բնական էր Յոյների մարմնամարզութիւնը, և ո՞վ կհամարձակէր ասել թէ նա մերը չարժէր: Մեր գիմնազիօններն այլևս խաղերի տեղեր չեն (Spielplatze) լատինական ludus բառի մտքով, միանգամայն գուարճութեան, հանգստութեան, վարժութեան և դաստիարակութեան կեդրօններ չեն: Բայց նոքա պարտաւոր են այն դառնալ: Նոքա կարօզ են մի օր մեր ցերուցան եղած ընկերական կեանքի ժողովակէտ կազմել: Ո՞րտեղ է այսօր այս ժողովատեղը: Սրճարաններում (Wirthshäuser)...

Զվիցէրան և Անգլիան (աւելացնելու էր և Ֆլանդրիան), որտեղ ազատութիւնը հինաւորց է, մեզ ներկայացնում են իրանց քանի մի աւանդութիւններով և սովորութիւններով, այն ազդեցութեան որոշ գծերը, որը կարօզ է ունենալ բարբօււլարքի վերա մարմնամարզութիւնը:

Մենք ժողովրդական տօներ չունինք: Սկեզեցական տօները բոլորովին հոգևոր ուղղութիւն ունին: Եւ արդարև ժողովրդական տօները գաղափար տալուց հետո է այն սլատիերը, որ ունենում են նոքա ներկայումս, չափազանց յաճախ պատրուակ դառնալով շատուքիչ աթենական գուարճութիւնների: Թող յիշեն և մտածեն, դարձեալ միանգամ, Օլիմպիայի մասին: Ազգային տօները կարօզ են ժողովրդի ինքնաձանաչօղութիւնը, խղճմտանքը մի բարձր կէտին հասցնել և կասկածելու չէ, թէ մարմնամարզութիւնը, Յոյներին մտաբերելով, կատարելապէս ընդունակ կլինի այս մեծ գործին աջակցելու:»

Այս է ասել մերձաւորապէս Պաուլոզէն պրօֆէսորն իւր դասին: Այս խօսքերը կարօղ են քաջալերել Փրանսական և բէլժական զպրօցական զօրազնդերի և մարմնամարզական ընկերութիւնների հաստատութիւնը: Յունական վարժութիւնները և հարկէ պիտի կերպարանափոխվին մասամբ, մանաւանդ որ արդեան քաղաքակրթութեան մէջ գինակրութիւնն ևս բոլորովին ուրիշ է: Իսկ շարժմունքին առհասարակ յունական պարզութիւն տալուց գործը կշահվի միայն: Արշաւանք, ոտոստումն, գօտէմարտութիւն ոչինչ փողի ծախս չեն պահանջում: Մենք ևս վերջապէս պիտի հասկանանք, որ մարմնամարզութիւնը եվրօպայում համարվում է ոչ միայն առողջապահական, այլև բարոյական և հայրենասիրական կրթութիւն, և պիտի աշխատենք իրագործել:

---

ԴՊՐՈՅՆԵՐ ԶԱՐԳԱՐԵԼՈՒ, ԴՊՐՈՅԱԿԱՆ ՊՍԿԵՐՆԵՐԻ ԵՒ ԱՌՆԱՍԱՐԱԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՃԱՇԱԿԸ ԶԱՐԳԱՅՆԵԼՈՒ ՄՍ.ՍԻՆ: (Մանկավ. № 1):

### III

Այս միտքն էր առաջնորդում, պ. նախարար, ձեր մասնաժողովի աշխատութիւններին: Նա հետագօտեց բոլոր միջոցները պատանի մտքերում գեղեցկութեան զգացումն թափանձեցնելու համար:

Նա կամեցաւ նախ որ նոյն ինքն դպրոցը գեղեցիկ լինի:

Ինչպէս որ եկեղեցին հաւատացողներն ընդհա-  
նուր տուն է, ինչպէս որ քաղաքային խորհրդա-  
րանք քաղաքացիներն ընդհանուր տուն է, նոյն-  
պէս և դպրոցը, իւր ամեն աստիճաններում, մա-  
նուկներն և երեսասարգների ընդհանուր տուն է:

Կրօնն իւր տաճարներում չբաւականացաւ իւր  
խորհուրդներն ռսուցանելով կամ աստուածպաշ-  
տութեան արարողութիւններ կատարելով. նա այն-  
պէս ժողովեց գեղարհետի շքեղութիւններ: Նե-  
նութեան հոյակապութեանն աւելանումեն երգի  
ներդաշնակութիւնը և երգեհօնի վսեմութիւնը,  
ոսկիներն պայծառութիւնը և նկարաստեղծների  
խորհրդաւորութիւնը, հրաշալի մեծ ապակիները,  
մուսիոն նկարները, պատկերները, արձանները:  
Քնդաքային վարչական տունն ևս, ամենուրեք, ուր  
հասարակաց կեանքն ազատօրէն զարգացել է, այն-  
պիսի մի շինութիւն է դարձել, որը կարելի չէ ոչ  
աւելի հոյակապ շինել արտաքուստ, ոչ աւելի հա-  
րուստ ամենաուսակ շքեղութիւններով ներքուստ:

Իւրոցը պիտի շտոնարհի ոչ տաճարն, ոչ քա-  
ղաքային խորհրդարանն առաջ: Նա ծառայում է  
նոյնպէս ամենքին, նա նոյնպէս սեպհականութիւն  
է ամենքի, նա նոյնպէս օգտաւէտ է ամենքին:  
Կեանքի համար ծնվող իւրաքանչիւր սերունդը  
նորա մէջով է անցնում, նա անցնում է նորա մէ-  
ջով այն տարիներում, երբ գարթումեն գաղա-  
փարները, երբ ձեռք են բերվում ամենաանօղա-  
կան տպաւորութիւնները: Կգայ մի ժամանակ, որը  
գուցէ շատ հեռու չէ, երբ մարդկութիւնը կգա-  
մանայ, թէ դպրոցը սկսված է այնպէս, ինչպէս որ

մնաց այսքան երկար, և թէ կրով սպիտակացրած մի տեսակ ամբար կարողացել է այսքան երկար հաւանելի լինել իբրև այն սրբավայրը, ուր պատրաստումէին կեանքի համար այս նոր սերունդները, որոնց ձեռին է ապագան:

Եթէ մենք չգիտենայինք թէ ոչինչ է լինում մի օրում և թէ ամենագերազանց վերանորոգութիւնները ժամանակ են պահանջում, մենք յօժարութեամբ կասէինք, որ մեր երիտասարդները համար պահանջումենք պալատներ: Ինչպէս որ Կոստէլիան, ցուցանելով իւր որդիները, ասումէր. «Ահա իմ չքնազագիւտ զարդերս», նոյնպէս և մենք կցանկայինք, որ Ֆրանսիան կարողանար վեհանձնութեամբ ցոյց տալ իւր դպրոցները: Մենք կցանկայինք, որ նոքա արժանի լինէին ամենուրեք մեր առաջին չիշատակարանների մէջ համարված լինելու: Սպառզան, չենք կասկածում այս մասին, կկատարէ այս գործը, որն այսօր գրեթէ անիրագործելի քան է երևում, չափազանց նոր լինելով: Թոյլ տանք ուրեմն ժամանակին իւր գործը կատարելու և բուականանանք այն առաջադիմութիւնն անելով, ինչ որ այսօր կարող է կատարվել:

Մեր դպրոցները միեմագոյն մասամբ, դուք այս լաւ գիտէք, պ. նախարար, հասարակ, գրեթէ միշտ տգեղ, գրեթէ միշտ վատ շինված տներ են: Նոցա շինողները որմնադիրներն են, և այժմ ևս դեռ նոքա են շինում: Մասնաժողովս կկամենար, որ այսուհետև մեր դպրոցները ճշմարիտ ճարտարապետների գործ լինին, որ ամենքը նոցա տեսնելիս լաւ հասկանային այն գործօղութեան հա-

սարակական արժանիքն, ինչ որ այնտեղ կատար-  
վումէ, որ մինչև անգամ իւր տեսքով դպրոցն  
ազդէր մանուկներին գեղեցկութեան թէ յարգը և  
թէ զգացումն: Գպրոցը չէ կարող ամեն տեղ մի-  
ևնոյն լինել. որովհետև կան մեծ և փոքր, հա-  
րուստ և չքաւոր համայնքներ: Գլխաւորն նայելով,  
մեր նահանգների շինութեան նիւթերը, տեղաւո-  
րելու պայմանները, ողն անգամ տարբերումեն  
միմեանցից: Մասնաժողովս մտածեց, որ ոչինչ չէ  
կարող ընդհանուր օգտին աւելի ընդդէմ լինել քան  
թէ կամենալն ամեն տեղ միևնոյն միաձև և անփո-  
փոխ օրինակին հետևել, որքան նշանաւոր և լինէր  
օրինակը: Նա մտածեց, որ ընդհակառակն հար-  
կաւոր է ամենայն ազատութիւն յարգել և տալ  
թէ համայնքին և թէ արհեստագէտներին: Բա-  
ւականաչափ նշանաւոր դպրոցական նախագծեր  
ներկայացրած էին և գործդրած էին այս վերջին  
տարիներում: Այլև մեր շատ խարտարապետներ  
աշխատեցին հնարներ գտնել մեր դպրոցները տար-  
բեր պայմանների մէջ կառուցանելու: Մասնաժո-  
ղովիս ձեռք ներկայացնելու առաջին վճիռն այն  
եղաւ, որ մի քանի տարով թէ գործադրված և  
թէ գործադրվելու արժանի դպրոցական նախա-  
գծերի հանդիսատեղ հաստատվէր, և սա աներկ-  
րայելի ծառայութիւն կմատուցանէր սկզբնական  
ուսմանը: Նախարարութիւնը կգնէր և կհրատա-  
րակէր լաւագոյն նախագծերը: Անկասկածելի է,  
որ դպրոցներ կառուցանելու դիտաւորված բազ-  
մաթիւ համայնքները բազմաւոր կլինէին իրանց  
առաջարկված այս օրինակներից օգուտ քաղել:

Ոչ միայն փոքրիկ սկզբնական դպրոցները մեր գիւղերում, այլև մեծ սկզբնական դպրոցները մեր քաղաքներում, մանկավարժանոցները, միջնակարգ դպրոցներն ու լիսէօնները և երբեմն միջև անգամ բարձրագոյն ուսման դպրոցները պիտի նորեց կառուցանվին: Ձեր մասնաժողովը մտածեց, որ սորա համար բաւական չէր լինի նախագծերի հանդիսատեղը, այլ թէ լաւ կլինէր, մրցման միջոցով, հրաւիրել բոլոր ճարտարապետներին: Նա առաջարկումէ ձեզ սահմանել այդ մրցանակը, որն պրօգրամը և պայմանները նախարարութիւնը պիտի որոշէ: Առաւել նշանաւոր նախագծերի հեղինակներին հարկաւոր կլինէր մեծ գումարներ չտակացնել: Մեր ազգային ժողովներն անկարծիք չէին բացասի ճշմարիտ ազգասիրական գործի համար կարևոր գումարներ: Մեր միջնակարգ դպրոցներն ու լիսէօններն այսօր մեծ մասամբ, և երբեմն միջև անգամ մեր համալսարանները, գետեզված են աւերակներում և մանր մասներէց և կտորներէց շինված տներում, որտեղ ամեն բանը ագեղ է, որտեղ դրեթէ ոչ մի մասն չէ համապատասխանում այն նպատակին, որի համար շինված է: Ատրելի է ասել, և դուք այս գիտէք փորձով, պ. նախարար, որ այս տեսարանը տխրութիւն, երբեմն գայթակհողութիւն է բերում այս դպրոցներին այցելողներին: Մենք հրաւէր ենք կարդում մեր ճարտարապետների, անդանդներին և հայրենասիրութեանը քրանսիային տալու նորան արժանի մանկավարժանոցներ, դպրոցներ, լիսէօններ և համալսարաններ:

IV

Բաւական չէ, պարոն նախարար, որ դպրոցի տունը, ինչպիսի աշակերտներ ևս որ լինին այնտեղ յաճախողները, նոցա ազդէ իւր ճարտարապետութեամբ գեղեցկութեան գգացումն, հարկաւոր է նոյնպէս որ դպրոցի ամեն բան, երբ աշակերտներն արդէն այնտեղ են, նպաստէր ծանուկներին գեղեցկութեան տալաւորութեանը կամ, աւելի շաւտսենք, վարկարար լուծին եկթարիվելու: Հարկաւոր է, որ նոցա աչքերն այնտեղ անդադար գեղասիրական տիպարներ տեսնեն: Այսպէս էր վարվում Բունաստանն իւր գիմնագիտներում, իւր ըմբշամարզարաններում, առանց ամենեւին յոգնելու պատանիներին կամ տղամարդիկներին հիանալի իրեր ներկայացնելով: Մասնաժողովիս ճարտարապետ անդամներն առաջարկեցին, որ դպրոցների պատերի վերին մասները ճարտարապետական զարդերով լինին, պատերի գոյները ներդաշնակ լինին և գաւիթներում արձաններ լինին: Եւ երբ դրամական միջոցները կներեն, մեր դպրոցները, լիսէօնները և հասարակարանները հանդիսարանները և միջանցքները պիտի զարդարվին քանդակներով և արձաններով: Մասնաժողովս այս առաջարկութիւնն ընդունեց: Եթէ նկարչութիւնն անբողբարս մեր օրերում շատ թանկագին գեղարհեստ է և մեր դպրոցներին անմատչելի, ուր ոչինչ միջակ բան պիտի չտեսնվի, ճեմապակեայ արհեստի երեսուն տարուց ի վեր արած առաջադիմութիւնը թոյլ է տալիս գոնէ առա-

Չարիւել մեր մանուկներին պատերի գարդարանքի  
այնպիսի օրինակներ, որոնք կարօղ են միւխթա-  
րել աչքերը թէ նկարի մաքրութեամբ և թէ  
գոյնի կենդանութեամբ:

Մի տարբեր կարծիք միայն երևեցաւ մասնա-  
ժողովում, այն ևս նոյն ինքն դասարանները մա-  
սին էր:

Բոլորովին հաւանելով դասարանի խոհեմ գար-  
դարումն, բոլորովին իրաւացի համարելով գեղա-  
սիրական իրերի ներմուծումն դասարանում յայտնի  
օրերին կամ յայտնի ժամերին, ոմանք անգամ-  
ներն կիւսմենային, որ գեղասիրական այս իրերը  
շարունակ և անշարժ չմնային, այնտեղ: Նոքա կլա-  
սիկենային, որ մի գուցէ միշտ աչքի առաջ լինելով,  
կորցնէին իրանց ներգործութիւնը աշակերտների  
մտքերի վերա: Նոքա կվախենային մանաւանդ,  
որ գարգերը չնպաստեն դիւրոշարժ երիտասարդ-  
ներին և մանուկներին մտամոլորելելու և չլսան-  
գարեն մտքի այն ամփոփումն, որը ուսուցչի դա-  
սերի համար առաջադիմութեան նշանաւոր պայ-  
մանն է: Պ. Էմիլ Տոէլա թէ ճարտարութեամբ և  
թէ համոզմամբ առանձնապէս այս կարծիքի  
Թարգման դարձաւ: Բոլորովին իրաւունք տալով  
այս երկիւղներ ազդօղ զգացմանը, մասնաժողովը  
համամիտ չեղաւ: Առաւելապէս երկու պատճառ-  
ներ կային այս որոշմանը. նախ որ մեր ժողովը-  
դական դպրոցները մեծ մասամբ չունին այսօր  
ոչ միջանցք, ոչ պատասխարված գաւիթ, և գեղա-  
սիրական իրերը դասարանից մերժելով միևնոյն  
է թէ մերժումներ նոյն ինքն դպրոցից: Նւ ապա

մտամուրումն, որից վախենումէին, ինքն ըստ  
ինքեան այնքան զարհուրելի չէ ամենեկին: Աշա-  
կերտը դասարանի մէջ է անցուցանում իւր ժա-  
մանակի լաւագոյն մասը, ուստի բարւոք համա-  
բեցինք, որ այնտեղ, մանաւանդ այնտեղ նորա աշ-  
քերը, ջրուած լինելով անգամ, իբրև լռիկ ուսու-  
ցիչներ գեղեցիկ իրերը տեսնէին, իւրաքանչիւր օր  
նոցանից դաս առնելով:

Այստեղ է որ մասնաժողովը կ'ամենումէ փոքր  
ինչ թախանձել ոչ թէ իբրև իւր գործի էական  
մասն—ամեն բան այստեղ նշանաւոր է և սխալ  
նպաստէ միևնոյն նպատակին—այլ իբրև կարևոր  
նորութիւն, որը մուծանել ամեն տեղ մեր դըպ-  
րոցներում նախարարութեան գործ է: Մեր խօսքը  
դպրոցական գեղասօլրական թանգարանների մա-  
սին է: Կեռևս երկար ժամանակ կանցնէ, մինչև  
որ մեր դպրոցները հոյակապ շինութիւններ  
կդառնան, մինչև որ նոքա կզարգարվին այնքան  
լաւ, որքան ցանկալի կլինէր աշքերի ուրախու-  
թեան և իրթութեան համար: Մակայն մենք կա-  
րող ենք այսօր իսկ մի բան անել, այն է մուծա-  
նել դպրոցներում որոշ մի քանակութեամբ իրեր,  
որոնք ներշնչէին գեղեցկութեան սէրը, ինչպէս որ  
ժողովածուները նպատումեն իրախօսութեան դա-  
սերին: Քնական արտոմութեանը կամ ձեռնարուես-  
տութեանը նուիրված դպրոցական թանգարան-  
ներն ամեն տեղ առաջ են գնում. հաստատենք  
ամենուրեք նոցա կողքին միւս տեսակ դպրոցա-  
կան թանգարաններ, որոնք նուիրված կլինին գե-  
ղարհեստին:

Ահա թէ մասնաժողովս ինչպէս է մտածում այս թանգարանները կազմել: Նա կամենումէ, որ ոչ մի գարոց, ամենահամեստն, ամենաչքաւորն անգամ զրկված չլինի նորանից: Տէրութեան և Համայնքների որոշած գումարներն ամեն տեղ ի նկատի առնելու է: Գլխաւորը լաւ դորձ կատարել սկսելն է, թողնելով ապագային տուաւել լաւ կատարելու հոգը:

Մասնաժողովը որոշած է յետագայ տնօրէնութիւնները մեր գիւղական դպրոցներում, գեղարհրական թանգարանը կունենայ միայն մի փոքր արձան, մի պոյգ կիսարձաններ, մի քանդակ, պատերի դարդարանքի քանի մի կադապտրներ, քանի մի վիճագրական պատկերներ և լուսանկարներ: Հարկաւ սա քիչ բան կերելի, եթէ մտածենք ինչ որ վայել էր անելու և շատ բան կերելի, եթէ մտածենք ներկայ գրութեան մասին, երբ դեղասիրական ոչինչ չկայ մեր դպրոցներում: Արտեղ միջոցները կներեն աւելի շննելու, աւելի և կշինվի: Մեր ժողովրդական մեծ դպրոցներում, որոնք բազմաթիւ դասարաններ ունին, իւրաքանչիւր դասարանն իւր փոքրիկ շատ ու քիչ հարուստ թանգարան կունենայ, որ և կբովանդակէ արդէն գեղարհեստի համառօտ պատմութեան սկզբունքը:

Վիսէօններ և միջնակարգ դպրոցներն իրանց գեղասիրական իրերը գետեղված կունենան դասարաններում, սերտարաններում, սեղանատանը, միջանցքներում: Առաւել միջոցներ ունեցող մեծ շէնքները բացի սորանից կունենան գեղասիրական ժողովածուների դահլիճ, որի դռները հեշ-

տութեամբ կրացվին աշակերտների համար, որ-  
տեղ գրականութեան կամ պատմութեան ուսու-  
ցիչը օգտաւէտ իրեր կգտնէ իւր դասերի համար:  
Պ. Պօլ Մանց առաջարկեց, որ մեր սկզբնական  
դպրոցներում անդամ, դպրոցական թանգարան  
պահօղ ուսուցիչը իրան օգնական ունենար այս  
փոքրիկ փոքրիվածուի պահպանութեան համար  
խառնից ընտրած մի աշակերտ: Այս միտքը մաս-  
նաւորապէս ոչ միայն սրտառուչ, այլև արգասաւոր  
երևեցաւ: Մեծ մասամբ փոքր բաներն են առա-  
ջացում մեծամեծ հետեանքները: Աշակերտն,  
որին չանձնված է վերահասու լինել փոքրիկ թան-  
գարանին, աւելի ուշք կգործնէ նորան քան թէ  
իւր ընկերները: Նա մի փոքր կկարծէ թէ նա իւր  
սեպհակահնութիւնն է: Այն ո՞վ գիտէ: Սորանից գուցէ  
ծածկված մի տաղանդ յայտնվի, որով մեր եր-  
կիրը մի մեծ քանդակագործ կամ մի մեծ նկարիչ  
աւելի ունենայ:

V

Մօտ քսան տարուց հետէ աչքերով ուսումն  
երևելի նշանակութիւն ստացաւ և անդադար ա-  
ռաջ է գնում մեր հորովված մանկավարժական  
եղանակներով: Երկրագնտեր և աշխարհագրական  
քարտէզներ, չափ ու կշռի աղիւսակներ, ընական  
պատմութեան պատկերներ արդէն զարդարումեն  
գրեթէ բոլոր դպրոցներն պատերը թէ ֆրանսիա-  
յում և թէ ուրիշ երկիրներում: Մասնաւորապէս  
կարծումէ, որ սա մի զօրաւոր միջոց է գեղա-

սերական զգացումն զարգացնելու համաջ: Բոլոր այս գանձազան պատկերները կարող են լինել գիտնական ճշգրտութեամբ, գեղեցիկ ձևով և ներդաշնակ գոյնով:

Ամենարգասաւոր միջոցներէց մին, գեղեցկութեան զգացումն տարածելու համար, այն նշաններն են, որոնք բաժանվում են իւրաքանչիւր եօթնեակը առաւել բաւարար աշխատութիւն ունեցած աշակերտներին, նմանապէս այն պարգևներ և նուէրներն, որոնք բաժանվում են հանգիստուր պարգևարանութեան օրը, դպրոցական տարեվերջում: Մինչև այժմ թէ մեր լիւթօններում ու միջնակարգ դպրոցներում և թէ սկզբնական դպրոցներում պարգև են տուել միմիայն գրքեր, որոնց գլխաւոր արժանաւորութիւնը շատ անգամ եղել է սերուն կազմը, իսկ իբրև երկրորդ աստիճանի պարգև միայն պսակներ են տուել: Ինչի այսուհետև երբեմնապէս բաժանելու չեն իբրև առաջին պարգև վիժազրական պատկերներէ ժողովածուներ, և իբրև երկրորդ պարգև—պատկերներ: Ծախսն առաւել շատ չէր լինի, և այս պարգևները թերևս առելի նախանձելի կլինէին:

Արդէն իսկ շարաթական նշաններն ամեն տեղ փոքրիկ պատկերներն են: Մանուկը նոցա տուն է բերում, ամբողջ ընտանիքը նայում է և ուրախանում է և կրթվում է միևնոյն ժամանակ, կարդալով պատկերին շարակցած վէպիկը: Եստ անգամ պատկերը կախում են պատից մեկի վերա. միմիայն մանուկը չէ որ օգուտ է քաղում այս ճանաչակի դասից, այլ ամբողջ տունը, մեծեր և փոք-

րեր: ժողովուրդը սիրում է բնականապէս գեղար-  
հեստը, նկարը, ներկերը, իրան ծանօթ առարկա-  
ների, իրան յատնի պատմական տեսարաններին  
նկարագրութիւնը: Մինչև անգամ կոշա, բազմերանգ  
և շփօթ նկարը գրաւում է նորան և գմայլեցնում:  
Շատ անգամ ամենահամեստ նկարները պահպա-  
նում են և զօրացնում են ժողովրդի մէջ գերբնական  
գրոյցներ, և մինչև անգամ քաղաքական ներգոր-  
ծութիւն են ունենում: Մթթ է չէ կարելի միևնոյնը  
յուսալ մեր երկրի մտաւոր զարգացման և նորա  
բարոյական առաջադիմութեան նպաստելու վե-  
րաբերմամբ դպրոցում ներմուծված խկապէս գե-  
ղասիրական պատկերներէց, որոնք դպրոցից կտա-  
րածվին ամեն ընտանիքներում, և միևնոյն ժա-  
մանակ գեղարհեստը կձառաչեցնեն գիտութեան,  
բարոյականութեան և հայրենասիրութեան ուս-  
մունքը ծաւալելու համար:

VI  
Այս սկզբունքը որոշելուց յետոյ, մասնաժողովը  
իւր գործը վերջացնելու համար պիտի քննէր ար-  
հեստագէտների կամ տպարանատէր-հրատարակիչ-  
ների արած առաջարկութիւնները վերաբերմամբ  
թէ մեր ամենատեսակ դպրոցներ վարդարելուն,  
թէ պատերից կախանելի նկարներին և քարտէզ-  
ներին և թէ դպրոցական պատկերներին: Սա  
ծանր և բարեխիղճ քննութիւնն էր, որի մանրամաս-  
ները պատմելն այստեղ երկար կլինէր, մեր նիս-  
տերի արձանագրութիւնների մէջ մեծ տեղ բռնե-

լով: Ղրլագրալի գրավաճառանոցի շափ ու կշռէ  
աղիւսակները, Աշէտ գրավաճառանոցի քարաէջ-  
ները և շարաթական նշանները, Գուպլի գրա-  
վաճառանոցի ներկանկարները, Ռափէսօնի հրա-  
տարակաճ լուսանկարների տպագրվածները նա-  
խարարութեան քաջայերութեանն առանձնապէս  
արժանի համարեց մասնաժողովս: Եստ անգամ  
մասնաժողովը ստիպված էր իրան ներկայացրած  
օրինակներին հաւանութիւն շտաբ Երբեմն գիւ-  
նական կամ պատմական դրօշները շատ սխալ  
էին, իսկ շատ անգամ գեղարհեստի գործարու-  
թիւնը չափազանց անգոհացուցիչ էր լինում, քար-  
տէղները և նկարները գոյները ճշող և վայրենի  
էին, իսկ պատմութենից կամ ընտանեկան կեան-  
քից քաղված նիւթերը չափազանց անճիշդ և  
սգեղ էին: Ի հարկէ մօտ քօան տարի առաջ  
Էպինարում պատրաստված պատկերներին նախ-  
լով, պէտքէ խոստովանենք, որ ընդհանրապէս  
առաջադիմութիւն եղած է: Բայց նախելով ինչ որ  
կատարված է այսօր մեզանից դուրս, մասնաւո-  
րապէս ինչ որ կատարվումէ Անգլիայում, մաս-  
նաժողովը չէ կարօղ կարծել թէ մեր Փրանսական  
հրատարակիչները չեն կարօղ հասնել ճաշակի  
պահանջներն առաւել գոհացնելու ստիճանին:  
Համբերութեամբ և տոկունութեամբ նոքա կարօղ  
են բոլորովին ուրիշ հետեւանքներին հասնել: Ի  
հարկէ զնի արժանութիւնն այստեղ մեծ նշանա-  
կութիւն ունի, բայց ամեն բան դորանում չէ, մա-  
նաւանդ, որ երբ մի գործը հարկւր հազարաւոր և  
միլիօնաւոր օրինակներով պիտի տարածվի, այս

օրինակների իւրաքանչիւրից ստացած օգուտը կարող է ամենուչափաւոր լինել:

Մասնաժողովի քանի մի անդամները պ. Կրթօգոսի հետ մտածումէին թէ արդե՞ք դպրոցական պատկերների համար նշանակված մրցումն օգտաւէտ արդիւնքներ չի ունենայ: Բայց և այնպէս մեծամասնութիւնը, պ. Պօլ Բէրի ճարտար սպառող-ցութիւն լրելուց յետոյ, մտածեց որ ազատութիւնը, մասնաւոր սկզբնաւորութիւնը, խնդրողակցութիւնը այս գործում ևս ամեն հնարներէց առաւել զօրաւոր են: Սակայն մասնաժողովը կամենումէ ասել հրատարակչներին, որ իւր կարծիքով, նոքա սխալվել են, մեր դպրոցիների համար նշանակված պատկերների օրինակները շարադրելու, առաւելագէս միջակ արհեստագէտներ հրուիրելով: Ի հարկէ նշանաւոր արհեստագէտներն աւելի թանկ գին կաւահանջէին, բայց միմիայն բազմաշնորհ արհեստագէտը կարող է մանուկներին սովորեցնել: Հրատարակիչները սխալվումեն նոյնպէս բազմատեսակ գոյներ տալով պատկերներին, սակաւութիւ պարզ և ճաշակով ընտրած ներկեր աւելի կմօտենան գեղարհեստին քան թէ բազմերանգ և շիտթ գոյները: Ժապօճացիները մեզ այդ լու ցոյց տուին: Իսկ պատկերների նիւթերն անսահման են, ինչպէս կետնքը և բնութիւնը, մեր ծաղիկները և մեր պտուղները, մեր ձեռնորուեստութիւնը, մեր աշխատութիւնները քաղաքում և գիւղում, արձանները, պատմութեան տեսարանները, գեղասիրական իրերի արտատալումն, այս ամենն իւր տեղն ունի դպրոցական

պատկերներն մէջ, ամեն բան իւր օգուտն ունի: Մասնաժողովը շատ ցաւեց, որ քաջալիբուծեան արժանի պատմական հեղինակութիւններ շատ քիչ գտաւ:

Այն հրատարակիչը, ով մանուկին կուսուցանէ առաւել լաւ սիրել իւր հայրենիքը, աչքերն առաջ դնելով նորա մեծամեծ ուրախութիւններն և նորա մեծամեծ սգաւորութիւնները, ազգային կրթութեան երախտագիտութեան արժանի կհամարվի: Պ. Դըլաբօրդը, որը դպրոցների գարդերում տեղ էր խնդրել այն մեծ մարդի պատկերի կամ կիսարձանի համար, որը պատիւ էր ամբողջ քանին մի նահանգներին, նորոգեց միևնոյն առաջարկութիւնը, և մասնաժողովը համամիտ գտնվեցաւ: Մեր ազգային միութիւնը բաւական հարստատուն է չորս դարից ի վեր և չէ կարող վտանգին հանդիպել, ուստի լաւ կլինէր, որ Ֆրանսիայի իւրաքանչիւր կողմը փառարանօրէն սրահսանէ այն գիւտեր հնարողների, գիտնականների, քաջ զինուորների, արհեստագէտների կամ մատենագիրների անունները, որոնց նա ծնել է. այս օրինակները նոր սերունդներին ազնիւ նախանձ կազդեն իրանց նախորդներին նմանելու:

Մասնաժողովն իրան ներկայացրած օրինակներից մեծ մասամբ անգոհունակ էր, այնուամենայնիւ այդ անգոհունակութիւնը նորան չէ վախեցնում: Այլինչ այնքան անիրաւ չէ, որքան ապագայում լինելի գործը ներկայ եղածով դատել: Գեղարհեստի ներմուծումն դպրոցում, պատկերի ձեւով, մեզանում գեռ ևս դրեթէ նորութիւն է:

Մասնաժողովը համոզված է, որ միանգամ սկսված շարժումն առաջ կգնայ, շուտ մեծանալով: Նա համոզված է, որ մեր հրատարակիչներն հետամուտ կլինին յօրինելու ընտիր պատկերներ պատեր գարդարելու, գեղեցիկ կազաւարներ, գեղեցիկ փորագրութիւններ, գեղեցիկ լուսանկարներ, որոնք արժանի կլինին գետեղվելու դպրոցական գեղասիրական թանգարաններում, կամ՝ բաժանվելու իրրև պարզև աշտիերտներին: Բայց այս շարժումն այնքան աւելի արգասաւոր կլինի, որքան աւելի լաւ առաջնորդներ կունենայ: Աւտոի ցանկալի կլինէր, եթէ աղբային լուսաւորութեան նախարարութեան մէջ մշտաաւ մասնաժողով սահմանվէր, որը ներկայ մասնաժողովս գործը կշարունակէր. նա կկարողանայ հարկաւոր դէպքում իւր խորհուրդներ տալ հրատարակիչներին, իմացնել յոցա կառավարութեան ցանկութիւնը և քննել նորանոր աշխատասիրութիւնները:

## VII

Մեր դպրոցներում գեղեցկութեան զգացումն զարգացնելու միջոցներ մուծանելով, առաջարկեցիք մասնաժողովին, պ. նախարար, դիտնական փորձերի խնդիրն ևս ուսումնասիրել: Այս փորձերը ներկայ ժամանակի մանկավարժական ամենամեծ առաջադիմութիւններէից մին է: Նոր մշակված գիտնական պրօգրամներն, որոնք հիմնված են բնական փաստերի դիտողութեան վերա, ամեն բոսէին չիշեցնումեն այն հիանալի ձգտումն, թէ

պէտք չէ երբէք աշակերտներին լոկ կանոններ  
ասել առանց փորձերի: Այսուհետև ուսուցիչներն  
իրանց գործը այն ժամանակ վերջացած պիտի  
համարեն, երբ նոցա աշակերտներն իրանց ստա-  
ցած տեղեկութիւնները կկարօղանան խիտ քն-  
նութեան ենթարկել: Եթէ ցանկալի է ամենա-  
հաստատ կերպով ապացուցանել այն, ինչի վերա  
որ խօսվում է, ապա ուրեմն հարկաւոր է ցոյց  
տալ նոյն լրբ: Այսուհետև ուսուցիչը նոյն ինքն  
իրերը պիտի անդադար իւր աշակերտներին աչքի  
առաջ դնէ: Աստղարանութեան, բնագիտութեան,  
բնալուծութեան, կենսաբանութեան գիտերը զգա-  
լի կդառնան աչքերի համար, ինչպէս որ միևնոյն  
ժամանակ աշխարհագրութեան կամ պատմութեան  
ուսումն, ապացուցութեան այս նոր միջոցներով,  
ճշգրտութեան և հետաքրքրութեան նոր տարր  
կգտնէ: Աշակերտներին գիտնական փորձեր ցոյց  
տալու միջոցը նոցա համար ճշմարիտ դրօսանք  
կլինի. միայն այս ձևով առաջարկված պատկեր-  
ները կտալուորվին ամենալաւ կերպով նոցա յիշ-  
ողութեան մէջ: Մասնաժողովը մեր դպրոցները զար-  
դարելու խնդրով զբաղելիս, պատերի վերա մեծ  
տեղ պահանջեց բնական պատմութեան պատկեր-  
ների համար: Պ. Ժանսէնի առաջարկութեամբ նա  
պահանջեց, որ մեր սկզբնական դպրոցների առաս-  
տաղի վերա ճիշդ և գեղեցիկ կերպով նկարվին  
մեր կիսագնտի համաստեղութիւնները:

Իւր կողմից գնդապետ Ռիւ թախանձելով բա-  
ցատրեց թէ որքան օգտաւէտ կլինէր, մեր գլխ-  
ուորների կրթութեան տեսակէտից, եթէ բոլոր երև-

տասարդ Ֆրանսացիները դարոցում արդէն ընդու-  
նակ լինին ցերեկով թէ գիշերով զանազան դորա-  
շարժական կրթութիւններ անելու:

Իւր աշխատութիւնների վախճանին հասնելով,  
իրան յանձնած պաշտօնն իւրովսանն կատարելով,  
մասնագործութիւնն իւր համոզումն ունի, որ ձեր ձեռ-  
նարկած վերանորոգութիւնից ամենաօգտաւէտ հե-  
տեանքներդուրս կգան մեր հայրենիքի թէ պատուի  
և թէ բարեբաղդութեան համար: Ազգային աշխա-  
տաւորները նորանից պռաւել յաջողակութիւն,  
պատուականութիւն և գերազանցութիւն կստա-  
նան, իսկ սրտերն և հոգիները նորանից առաւել  
ազնուութիւն կստանան: Ֆրանսիան ժողովրդապէ-  
տութիւն է, և նոքա ինչազարներ կլինէին ով  
կմտածէր այժմ ժողովրդապետութեան առաջ ճա-  
նապարհ փակել: Բայց որքան մի ժողովուրդ աւելի  
ժողովրդապետական է, հասարակական կրթու-  
թեան պարտքերն այնքան աւելի օրբօր են այն  
տեղ: Մի ժողովուրդ, որի մէջ հաւասարութեան  
հետեանքը սրտերն և մտքերը նուաստացնելն է,  
նոյնիսկ սորանով իրան դատապարտած կլինի եշ-  
խանութենից հրաժարվելու:

Մի ազգ, որն ինքն իրան կառավարելու պատիւ  
պահանջեց, արժանի պիտի լինի իրան կառավա-  
րելուն: Նա ամբողջապէս վեհանձն և ազնիւ պիտի  
լինի, նա պիտի գտնէ ամեն ժամանակ իւր պաշտ-  
պանութիւնը յաիշտակմունքի դէմ իւր բանակա-  
նութեան մէջ, փափկութեան կամ հեշտասիրու-  
թեան դէմ իւր բարոյական ոյժի մէջ, ռամկական  
հեշտ վայելութիւնների դէմ գեղեցկութեան

զգացման մէջ: Միայն բանականութիւնը, բարոյտ-  
կան ոյժը, գեղեցկութեան վեհանձն հիացումն  
կարող են այսօր, ինչպէս և երբեմն, արիախան  
Չանք սովորեցնել խաղաղութեան կամ պատե-  
րազմի մէջ, վսեմութիւն տալ, ապագան ապահո-  
վացնել: Բանանք ուրեմն ճաշակել յիստիագօղ բո-  
լոր հոգիներին, ամբողջապէս բանանք կեանքի այս  
երեք ազբիւրները. գիտութիւն, առաքինութիւն,  
գեղեցկութիւն:

Թող չլինին այլևս մեզանում ժառանգութենից  
զրկվածներ, ոչ գիտութեան և կրթութեան ժա-  
ռանգութենից, ոչ գեղարհետի ժառանգութենից  
զրկվածներ: Մենք սարսափելի վորձութիւններ  
տեսանք, որից Ֆրանսիան հազիւ չկործանվեցաւ,  
և որից, աւաղ, նա անվնաս դուրս չեկաւ: Կոչենք  
նորան օգնելու, նորան բարձրանալու գործը վեր-  
ջացնելու համար, բարոյական կրթութիւնը, կոչենք  
ուսումն, կոչենք մանաւանդ այսքան երկար մո-  
ռացված, այսքան երկար արհամարհված գեղար-  
հեստը: Երբ Ֆրանսիայի սիրելի նաւը ամուր հաս-  
տատված կլինի այս երեք խարխսների վերա,  
նա կկարողանայ դիմադրել ամենայն փոթորիկ-  
ներին. մենք կարող ենք վստահութեամբ կրկնել  
այն խօսքը, որը մեր նշանաբանն է մնում, ինչպէս  
որ մեր հայրերին էր, որոնք նմանապէս շատ ան-  
գամ ծանր փորձութիւններին ենթարկվեցան. Յոյս:

Ս. ԳՐՔԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՍՍԵՐԻ ՄՍՍԻՆ:

Ս. Գրքի աշխարհագրութեանն ամենևին ուշք չեն դարձնում մեր կրօնուսույցները: Մեր սրօգրամներում թէև յիշած ենք թէ կրօնուսույցն աչքի առաջ պիտի ունենայ անդադար Պաղէստինէի քարտէզը և պիտի սրահանջէ աշակերտներէց ս. երկրի դերքը, քաղաքների, գիւղերի, ծովերի, լճերի, գետերի, սարերի տեղերն իմանալ, բայց յատկապէս ս. երկրի աշխարհագրութեան սրօգրամը չնշանակեցինք: Գեուևս ոչինչ ինդրը սրարդլած չէ կտակարանի աշխարհագրութեան վերաբերմամբ թէ արդեօք առանձին դասեր պիտի սահմանվին նորա համար, թէ է՞րբ և ի՞նչ տեղեկութիւններ պիտի հաղորդվին մանուկներին, և թէ կան արդէօք որեւցէ նպաստներ կտակարանի աշխարհագրութեան համար: Այս հարցերին չէ կարելի մեր մանկավարժական գրականութեան մէջ սրտասխան գտներ:

Սակայն ս. գրքի կամ բիբլիական աշխարհագրութիւնը սրբազան պատմութեան շատ նշանաւոր և անհրաժեշտ կարևոր մասն է:

Նախ որ կրօնի դասերն աւելի հետաքրքիր կլինին մանուկների համար, երբ կիմանան ս. երկրի դերքը, բնութեան յատկութիւնները և այլն: Ապա քարտէզը, պատկերները, դերքի, տարածութեան նկարագրութիւններն աւելի նկատողական, ուստի աւելի բնական և հեշտ ձև կտան դասերին:

Այս եղանակով հաղորդված սրբազան պատմութեան տեղեկութիւններն աւելի հաստատ և եր-

կար կ'պահանջէր մանուկներէ յերողութեան մէջ: Մանաւանդ եթէ նոյն ինքն աշակերտները կ'վարժվին քարտէզ գծագրելով:

Աշխարհագրութիւնը պատմութեանն իրականութեան բնաւորութիւն է հաղորդում: Առանց աշխարհագրութեան պատմութիւնը կ'արժեք ոգի մէջ է կ'ախած և չէ կ'արող բաւականացնել թէ հասակաւորին և թէ մանուկին: Հին երբայեցիներէ երկրի բնութեան հետ ծանօթանալով, մանուկներն աւելի հեշտութեամբ կ'հասկանան բնութենից, երկրի դերքից առաջացած ժողովրդի ունեցած առանձին յատկութիւնները: Վերջապէս մանուկներն աւելի գիտակցարար կ'իարդան սուրբ գերքը, և ընդհանրապէս աշխարհագրութիւնը լաւագոյն նպաստ կ'կրնի սրբագան պատմութիւնը հիմնարարապէս ուսումնասիրելու:

Ս. Գրքի աշխարհագրութեան համար առանձին դասեր չեն կ'արող լինել, այլ կ'ընտելուցը պիտի հաղորդէ ս. երկրին վերաբերված աշխարհագրական տեղեկութիւնները երբ կ'արեւորութիւն կ'հանդիպէ դասերի միջոցին, այն ևս տեղեկութիւնները դասերի բովանդակութեանը յարմարեցնելով: Օրինակ նահապետներէ մասին պատմելիս կ'ընտելուցը երկրի մի կողմ պիտի նկարագրէ, Մովսէսի, Նաւէի Յեսուի մասին պատմելիս, միւս կողմեք պիտի նկարագրէ, Աւետեաց երկրի նուաճումն պատմելիս Պաղեստինէն 12 մասն բաժանված պիտի նկարագրէ, Թագաւորների պատմութիւն և բարբելոնական գերութիւն պատմելիս Պաղեստինէի դրացի երկիրների հետ պիտի ծանօթացնէ և այլն:

Մեր պրօգրամով ս. գրքի պատմութիւնը սկսվում է ուսման երրորդ տարուց, երբ աշակերտները գեաւեն կարդալ և գրել: Ուստի նոցա կարելի է անմիջապէս հաղորդել աշխարհագրական տեղեկութիւնները: Նախ սկսելու է պատկերներ ցոյց տալ, օրինակ Ամստէրդամում սպված պատկերազարդ ս. գրքից, կամ աւելի յարմար է Եվրօպայում սպված հիանալի պատկերներեց օգուտ քաղել: Պատկերներեց յետոյ գիմելու է քարտէզին: Դժուար թէ կրօնուսոյցը ժամանակ գտնէ աշխարհագրական ընդհանուր սկզբնական տեղեկութիւններ տալու, և յարմարութիւն ևս չունի: Սկզբնական տեղեկութիւնները կարօղ է մայրենի լեզուի ուսուցիչը հաղորդել: Մանաւանդ որ լեզուի ուսուցիչն ամենայն ընթացարանում գտնված աշխարհագրական յօդուածները կարգալիս պիտի բացատրէ մանուկներին ընդհանուր աշխարհագրական սկզբնական տեղեկութիւնները:

Քարտէզը, ասացի, պիտի գծագրեն նոյն ինքն աշակերտները, ուսուցիչը պիտի գծագրէ կաւիճով սեաւ տախտակի վերայ, աշակերտները նորան հետեւելով պիտի գծագրեն իրանց տետրակում: Ամբողջ քարտէզը միանգամից պիտի չգծագրվի, այլ հետզհետէ, նորանոր տեղեկութիւններ ստանալու համեմատ: Ինչ որ աշակերտները գեաւ սովորած չեն, պիտի չլինի քարտէզի վերայ, այլ երբ ուսուցիչը մի նոր անուն կտայ իւր բացատրութեամբ, աշակերտները նորան իւր տեղը կհշանակեն: Այս կերպով ս. երկրի հետ ծանօթանալուց յետոյ, տալու է աշակերտին տպագրական քարտէզ: Միև-

նոյն ժամանակ կրօնուտոյցը պիտի հաղորդէ հին տեղերի արդեան անունները:

Պաղեստինէն ընտիր քարտէզներ կան եվրօպական լեզուներով: Ռուսերէն յարմարագոյնն է Իլլինի հրատարակածը (գինն է 50 կօպ): Պաղեստինէն քարտէզը հայերէն ևս կայ Վենետիկում հրատարակված:

Ինչ յայտնի չէ թէ կայ արդե՞ք հայերէն որևէցէ նպաստ ս. գրքի աշխարհագրութեան համար: Եթէ կայ, Վենետիկում կամ Կ. Պօլսում տպված պիտի լինի, որ իմ ձեռս չէ հասել: Ռուսերէն կայ մի գիրք այս վերնագրով. „Священно-церковная географія, показывающая происхождение народовъ, состояніе Палестины отъ Авраама до нашихъ времянь, съ историческими и географическими замѣчаніями обо всѣхъ важнѣйшихъ мѣстахъ, упоминаемыхъ въ ветхомъ и новомъ завѣтахъ“, составилъ В. П. П въ 1848 г.: Թէև գրքի վերա գրված է թէ յօրինել է Վ. Պ. Պ. և Ռուսիայում երկար ժամանակ կարծվումէր իբրև Վ. Պ. Պ-ի հեղինակութիւն, բայց այս գիրքը բառացի Թարգմանութիւն է Փրանսացի Մէյսսս և Մելլո գեանականների գրքի, որն առաջին անգամ տպվել է Փարիզում 1841 թ.: 1844 թ. այս գիրքը տպվեցաւ Փարիզում Էօթներորդ տպագրութեամբ հետևեալ վերնագրով. „Geographie sacrée contenant l'origine des nations, l'état de la Palestine aux différentes époques depuis le temps d'Abraham jusqu'à la conquête de cette contrée par les Romains et des notices historiques sur tous les lieux cités dans l'ancien et dans le nou-

veau testament, par M. M. Achille Meissas et Michelot“:

Նրանի թէ մեր կրօնուսուցիչները կարօղանային իրանց դասերի համար օգուտ քաղել մինչև կամ միևնոցի՝ Իսկ թէ ս. գրքի աշխարհագրութենից քնն պիտի աւանդվի ծխական դպրոցում, կհրատարակենք յետագայ տետրում:

1874 թ. Մօսկվայում ռուսերէն մի ուրիշ գրքոյկ ևս հրատարակվեցաւ, 30 էրեսից բաղկացած այս վերնագրով. „Краткія свѣдѣнія изъ священной географіи. состав. Н. П. Уго գրքոյիւր բառ առ բառ քաղված է Վ. Պ. Պ-ի թարգմանած աշխարհագրութենից:

Անցեալ 1883 թուին ֆարեգում հրատարակվեցաւ նոր գրքոյկ 62 էրեսից բաղկացած այս վերնագրով. Géographie de la Terre sainte... par Louis Segond (ս. երկրի աշխարհագրութիւն... շարադրեց Սեգոն, գինն է 1 Փրանկ 25 սանտիմ): Եստ սերուն գրքոյկ է սա, ունի և քարտէզ: Ա. երկրի կլիման նկարագրված է շատ ճշգրութեամբ իւր օտարոտի երկուցթնեքով: Նոյնպէս մանրամասնօրէն նկարագրված են երկրի բերքերը: Հեղինակը կարծես ականատես է ինչ որ նկարագրումէ և իւր հետ իւր ընթերցողն ևս: Սարերը, լճերը իբրև կենդանի արտակերներ են ներկայացնում, ուստի և աշակերտները յիշօղութիւնը յօգնելու չէ այս գրքոյին ուսումնասիրելով:

Այս տարի ուսնազն յայտնի կրօնագէտ Աթ. Սակալօլը հրատարակեց իւր յօրինած ընտիր և հարուստ բիբլիական աշխարհագրութիւնն այս վերնագրով. Библейская географія, (съ дополнитель-

НЫМИ СВѢДѢНІЯМИ ИЗЪ АРХЕОЛОГІИ) СІІВ. 1884.

Գինը մի մանկթ է:

Ս. գրքի աշխարհագրութեան համար, բացի պատի քարտեզից, կարևոր նպատակ է առաջանում: Արժեքավորները կարող են օգուտ բաղել Պէտերբուրգում նոր հրատարակված „Атласъ облейской географіи“ ժողովածուից: Գինը 75 կողմ է:

ԱԻՇՏԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏԻՆ:

(Նմանութիւն):

Նրա ճշմարիտ խօսքից համար

Գլխից պատրաստ է ուր առաջար,

Զբաղարտումնն քեզ եղբայրներ,

Արտասանել դու մի շատուկ

Իսուն անէծքի ոտտիկ բառեր:

Նրա զգումնս հոգից մաքուր,

Սուտ և անարգ խօսք կենի ցուր:

Իսու աչն աչքով նայիք գործին,

Որով խաչից Տէրն երկնային

Նայումէր մեղաւորներին:

Տես անարգված, խաչված արդէն,

— Ձի ոչ գիտեն թէ զինչ գործեն,

„Թող դոցա, Հայր“—նա ձայնումէր:

Արդ ով կորցնել կշանդանէր

Նորան, որին ներումէ Տէր:

Իշխան Քաղաքառումի:

ՓՈՐՁՆԱԿԱՆ ԳԱՍ ԱՆՈՒՆԻ ՄԱՍԻՆ ՅԲԱՆՍՈՒԿԱՆ  
ԳՊՐՈՅՈՒՄ:

Առաջարկելով առաջին դասի փորձը անունի մասին, կարծում ենք, որ այս օրինակը կարող է օգտուել լինել ուսուցիչներին տարրական դասընթացի մէջ:

Անձներ նշանակող անուններ: Աւուուէչը դառնալով աշակերտին, հարցնում է նորանից, թէ ի՞նչ է նորա անունը:

— Պատ. Ի՞մ անունս ժիւլ է:

Նոյն խնդիրն առաջարկվում է ուրիշ աշակերտներին ևս:

— Հարց. Ի՞նչ է ձեր հայրը, ժիւլ:

Պ. Հայրս հողագործ է:

Հ. Իսկ ձեր հայրը, Փան:

Պ. Ի՞մ հայրս հայթուիս է:

Հ. Ձեզ ո՞վ մեծացրեց, ժօզէֆ:

Պ. Ինձ մեծացրին հայրս և մայրս:

Հ. Ո՞վ է սովորեցնում ձեզ, Կտիէն:

Պ. Ինձ սովորեցնում է ուսուցիչս:

Հ. Աւելիք եղբայրներ և քոյրեր: Պ. Այո (կամ ոչ):

Հ. Ի՞նչ բառով են ձեզ կանչում:

Պ. Ինձ կանչում են ժիւլ բառով:

Հ. Իսկ ձե՞զ: Պ. Ինձ կանչում են Կտիէն բառով:

Հ. Ի՞նչ բառով են կանչում հայր շինողին:

Պ. Դորան կանչում են հայթուիս:

Հ. Ի՞նչ են ասում նորան, ով ձեզ սովորեցնում է:

Պ. Մեզ սովորեցնողին ասում են ուսուցիչ:

Հ. Ի՞նչ հարկաւոր է ժիւլ բառը:

Պ. Եւ հարկաւոր է մի անձն նշանակելու համար:  
Հ. Ի՞նչ հարկաւոր են ժան, հացեւոյ, ստոսցի,  
արծաթի, հոյր, ճոյր, եղբոյր, քոյր բառերը:

Պ. Այս բառերը հարկաւոր են զանազան անձներ  
նշանակելու համար:

Ուսուցիչ. Արեմն այն բառերը, որոնք հարկա-  
ւոր են անձներ նշանակելու, կոչվում են անուններ:

Հ. Ի՞նչպէս են կոչվում այն բառերը, որոնք  
անձներ նշանակելու համար են: Պատաս.

Հ. Ի՞նչ են ասում այն բառերին, որոնք անձներ  
նշանակելու համար են: Պատաս.

Հ. Ի՞նչ է անուն:

Պ. Անունն այն բառ է, որը մի անձն նշանա-  
կելու համար է:

Հ. Ասացէք քանի մի անուններ: Պ. ...

Հ. Ի՞նչի ժիւլ բառը անուն է:

Պ. Ժիւլ բառն անուն է նորա համար, որ նա մի  
անձն նշանակելու համար է:

Հ. Ի՞նչի հոյր բառը անուն է: Պ. ...

Հ. Ի՞նչի հացեւոյ բառը անուն է: Պ. ...

Այնուհետև ուսուցիչը գրում է սեւա ստախակի  
վերա քանի մի խօսքեր, այս ձևով. ճոյրը անուն է  
նոր ճանաչելու, և առաջարկում է աշակերտներին գտնել  
նորա մէջ պարունակվող անունները: Այս խօսքի  
մէջ երկու անուն կայ. ճոյր և ճանաչելու:

Հ. Ի՞նչի ճոյր բառը անուն է:

Պ. Մայր բառն անուն է նորա համար, որ նա  
մի անձն է նշանակում:

Հ. Ի՞նչի ճանաչ բառը անուն է: Պ. ...

Այս բացատրութենից տեսոյ, մի աշակերտ կրթ

տախտակի վերա այսպիսի խօսքը. Ուսուցիչը վարչա-  
պրեյ կար աշխատանքը աշակերտին:

Հ. Ի՞նչ է նշանակում աշխատասէր բառը: Պ. ...

Հ. Ո՞վ է աշխատասէր մանուկ: Պ. ...

Հ. Ե՞րբ աշակերտն աշխատասէր է: Պ. ...

Հ. Սրդե՞ք միթէ շատ անուններ կան այս  
խօսքի մէջ:

Պ. Երկու անուն կայ. ուսուցիչ և աշակերտ:

Հ. Ի՞նչի ուսուցիչ բառն անուն է:

Պ. Ուսուցիչ բառը անուն է նորա համար, որ  
նա մի անձն նշանակելու համար է:

Հ. Ի՞նչի աշակերտ բառը անուն է: Պ. ...

Գրել տալու է սեաւ տախտակի վերա հետզհետէ  
հինգ կամ վեց նոյն տեսակ խօսքեր, Հաւաստիա-  
նալու է, որ աշակերտները լաւ են հասկանում  
միտքը և առաջարկելու է միևնոյն հարցերն, ինչ  
որ առաջին խօսքի վերաբերմամբ:

Գրելի գրաւ: — Յետոյ աշակերտները կօրինակեն թո-  
ւոր խօսքերը, և կնշանակեն մին միւսից յետոյ  
այն խօսքերի մէջ գտնված թուր անունները:

Գրաւ սրբագրուելիս: — Այնուհետև տետրակները կը-  
լանձնեն ուսուցչին: Նա կսրբագրէ սխալները, որոնք  
կարող էին սպրդել խօսքերն օրինակելիս կամ  
անունները գրելիս:

Գրաւ օրինակում: — Սրբագրութենից յետոյ, աշակերտ-  
ները կպարզազրեն դասը միևնոյն տետրակի մէջ:

Անտառներ նշանակող անուններ: Հ. Ի՞նչպէս է կող-  
վում այն անասունը, որը կաթ է տալիս: Պ. ...

Հ. Ի՞նչպէս է կոչվում այն անասունը, որը սայլ  
է քարշում: Պ. ...

Հ. Ի՞նչ անուն են տալիս այն անասուններին,  
որոնք թռչում են օդի մէջ: Պ. ...

Հ. Այն թնչ անասուն է, որ մկներ է որսում: Պ. ...

Հ. Ասացէք գլխաւոր թռչուններ, որոնք գրա-  
նվում են մեր պարտէզներում: Պ. ...

Հ. Կով, չի, եղ, Քաշան, Կորա, Տափ, Ճ՞ճղա՛ն և այլն  
բառերը անձներ նշանակելու համար են արդե՞ք:  
Պ. ...

Հ. Ի՞նչ հարկաւոր է ի՞նչ բառը: Պ. ...

Հ. Ի՞նչ հարկաւոր է չի բառը: Պ. ...

Ուսուցիչ. Ուրեմն այն բառերը, որոնք անասուն-  
ներ նշանակելու համար են, կոչվում են նմանա-  
պէս անուններ:

Հ. Ի՞նչի ի՞նչ բառը անուն է: Պ. ...

Հ. Ի՞նչի ճ՞ճղա՛ն բառը անուն է: Պ. ...

Յետոյ անելու է միևնոյն վարժութիւնները թէ  
տախտակի վերա և թէ գրասուր, ինչպէս որ վերև  
նշանակվեցաւ:

Իրեր նշանակող անուններ: Ուսուցիչը մի գիրք ցոյց  
տալով, հարցնում է. Ի՞նչպէս է կոչվում այս իրը:  
Պ. ...

Հ. Իսկ սա՞ն: Պ. ...

Հ. Ո՞րտեղ էք գտնվում այս ըսպէիս: Պ. ...

Հ. Ո՞րտեղ են բնակում մարդիկ: Պ. ...

Հ. Ո՞րտեղ են գետեղում տնային անասուններին:  
Պ. ...

Հ. Ի՞նչ, խնո՞ն, Կորոյ, Կոտն, Կիտո, Կո՞ն և այլն բա-  
ռերը անձներ կամ անասուններ նշանակելու հա-  
մար են արդե՞ք: Պ. ...

Հ. Հասա թնչի համար են նոքա:

Պ. Նոքա իրեր նշանակելու համար են:  
Ուսուցիչ. Ուրեմն այն բառերը, որոնք իրեր նշանակելու համար են, նոյնպէս տոաներ են:

Հ. Ի՞նչ է դուն բառը: Պ. ...

Հ. Ի՞նչի դուն բառը անուն է:

Պ. Տուն բառը անուն է նորա համար, որ նա իր է նշանակում:

Այնուհետև աշակերտներին վարժեցնելու է նոյն եղանակով, ինչպէս որ գրված է վերև:

### ՆՎՐՈՊԱՅԻՆԵՐԻ ԴՊՐՈՅԱՎԱՐՈՒԹԻՒՆ.

Չեռնարկելով պատմել համառօտապէս ինչ որ լսեցի, գիտեցի և սովորեցի եվրօպական մանկավարժական աշխարհում, 14 ամիս անցուցանելով անդադար Նվրօպայի գանազան դպրոցների և դպրոցական անձների մէջ, գիտեմ, որ շատ կերկարէր խօսքս, եթէ Նվրօպայի ներքին և հասարակական կեանքի վերաբերմամբ արած դիտողութիւններս և նկարագիրներն ևս հազորդէի ընթերցողին: Կասեմ միայն, որ եվրօպացիների կեանքը դիտելով, մարդս բնականապէս այն խօրին համոզմանն է գալիս թէ արդարև բարոյապէս և մտաւորապէս, և նոյնիսկ Ֆիզիքապէս այնչափ կարօղ մարդիկների Արարիչն ամենակարօղ էակ պիտի լինի և թէ այն մարդիկ, նայելով նոցա մտածելու, գործելու և կենցաղավարելու եղանակին, արդարև Աստուծու պատկերի և նմանութեան համաձայն ստեղծված են: Նոցա կեանքն

է շարունակ և անդադար մարդասիրութիւն, ճշմարտութիւն, անկեղծութիւն, աշխատանք, առաջադիմութիւն: Իմ նպատակս իմ տեսած և ուսումնասիրած եվրոպական դպրոցի հետ ծանօթացնելն է. այս ևս շատ ընդարձակ նիւթ է, եթէ կյաջողի ինձ փափագս լրացնել: Բայց և այնպէս եթէ կպատահին, քաղաքակրթութեամբ զմայլեցնող և հեացնող կեանքին վերաբերված և նկատմունքիս մէջ բնականաբար սպրդած քանի մի դիտողութիւնները, գեղչելու չեմ:

1880 թ. դպրոցական քննութիւններն և ամառնային արձակուրդը մօտենումէին: Այն տարին առաջին անգամ էին վերջացնում Գ. Ճեմարանի աշակերտները դպրոցական դասընթացը, վերջին դասարանը վեցերորդ համարվելով: Երջանկայիշատակ Գէորգ կաթողիկոսն արդէն համոզվել էր, և ես բարերարդ էի գտնվել նորա այդ համոզումն և վճիռ կազմելիս մասնակցութիւն ունենալ, որ գ. դասարանը վերջին լինի ճեմարանում, զոնէ առժամանակ, և լաւագոյն աշակերտներն ուղարկվին Եվրոպայի զանազան դպրոցներ գիտութեան զանազան ճիւղեր ուսումնասիրելու, էջմիածին վերադառնալու պայմանով: Հոգելոյս կաթողիկոսը համոզվել էր, որ դպրոցական վեց դասարաններում ամանձին ուշք դարձնելով ազգային ուսմունքին, ամենահիմնաւոր կերպով ուսումնասիրել տալով հայկական լեզու, պատմութիւն և կրօնը, արտաքին գիտութիւններ պէտքէ ձեռք բերել անշուտ Եվրոպայում, եվրոպացիների ազնիւ և արդար կեանքի մէջ ապրելով և կրթվելով: Նա

վճռել էր, որ նոյն տարի առաջին անգամ դըպրանոցական դասընթացն աւարտող աշակերտներէց ընտիրները գնացին Եվրոպայ և կրօնաւորը մի ուղեկցութեամբ և վերատեսչութեամբ ուսումնասիրէին լեզուներ և գիտութիւններ: Եւ այսպէս իրաւ մեծն Սահակի և Մեսրոպի գործ պիտի կատարէք, արտաքուստ ներս ամէլ հետզհետէ եվրոպական գիտութիւնը և բարոյականութիւնը և նորոգել կենդանացնել Եջմիածինը, շինել նորան կենդանի Աստուծու սրբավայր, տաճար իմաստութեան, աղբիւր գիտութեան: Բայց այս խնդրում անբաղդարար նոյնչափ բարեբաղդ չգտնվեցայ, որչափ երկու տարի առաջ ճեմարանում հին կլասիքական լեզուները աւանդելու խնդրում: Վեհ կաթողիկոսի մշտապտոյտ չար հրեշտակը և առակելապէս Գարբիէլ Եսիսկոպոսի անբաղդարար վաղ հասած թղթերում յայտնված քանի մի խօսքերը ճեմարանի մասին փոխեցին խնդիրը, և մի օր յունկարձ լսեցինք կաթողիկոսի բերանից թէ եօթներորդ դասարանն անշուշտ պիտի բացվի: Երբ միւս անգամ Անդրէաս Եսիսկոպոսն և ես ասացինք թէ ուսուցիչներ չկան, շատ դժուար կլինի, նա ասանց դիմադրութիւն լսել յօժարելու կրկին պատուիրեց. «որպէս և իցէ հնարներ գործ դնելու է, մինչև անգամ եթէ կտտիսվինք յետոյ թող փակվի, բայց այս տարի իմ կոմքս է, որ է. դասարանը բացվի: Պիտի կառավարվէք ներկայ ուսուցիչներով, սասայ, իսկ մանկավարժութիւնը և բեմբասացութիւնը դու կարող ես աւանդել, սսաց ինձ: Ես խոնարհաբար յայտնեցի իմ անկարողու-

Թիւնը և անհնարաւորութիւնը, յուսալով որ Թեր-  
ևս մանկավարժութեան խնդիրը արգելք լինի  
է. դասարանի բացմանը: Եւ երբ Հայրապետը պա-  
հանջեց ինձանից, որ հնար գտնեմ մանկավար-  
ժութիւն դասախօսելու, ինչպէս որ իւր հրամանով  
նախընթաց տարին ստիպեցայ տրամաբանութեան  
դասեր չանձն առնել, ասացի, որ առնուազն գոնէ  
մի տարի կարևոր է ինձ պատրաստուել դասախօ-  
սել կարողանալու համար: Ուրեմն, ասաց, առա-  
ջին տարի Թող առանց մանկավարժութեան լինի  
եօթներորդ դասարանը, և ինձ պատուիրեց, ինչ-  
պէս և ուր որ գիտեմ, գնալ Ռուսիա թէ արտա-  
սահման մանկավարժութիւն ուսումնասիրելու: Ի  
հարկէ գնալու էր Եվրոպա: Նոյն միջոցին կաթո-  
ղիկոսն ինձանից ստորագրութիւն առաւ այս բո-  
վանդակութեամբ. «Տամ զստորագրութիւն Վեհ.  
Հայրապետի իմում առ այն զի առ 1 սեպտեմբերի  
1881 թ. պարտաւորեմ գտանել աստ ի ս. Եջմիա-  
ծին առ ի դասախօսել զմանկավարժութիւն ի  
Գ. Ճեմարանի»: Այս ստորագրութիւնն առնելու  
անչարմարութիւնը, իւր սովորութեան համաձայն,  
կամեցաւ մեղմացնել, քաղցրացնել հետեւեալ խօս-  
քերով. «Ես քեզ հաւատումեմ, բայց կեանք և  
մահ կայ, Թող ստորագրութիւնդ լինի այս-  
տեղ»:

Միևնոյն ժամանակ պատուիրեց ինձ թէ այն-  
տեղ բեմբասացութեանն ևս կնայես, առ որ Անդ-  
րէաս Եպիսկոպոսն ասաց թէ շատ կժանրաբեռնվիմ  
ես: Կաթողիկոսը պատասխանեց. Խորէն վարդա-  
պետի համար դա ոչինչ ծանրաբեռնութիւն է,

քանի որ սա գիտէ քաջ քարոզել, միայն փոքր մի ուսուցանելու եղանակին պիտի նայէ:

Այլև կաթողիկոսը պատուիրեց, որ Արարատի խմբագրութիւնն իմ վերաս մնայ, և իմ կողմից գտնեմ ոք և յանձնեմ նորան ցվերադարձ իմ, յարակցելով, որ եթէ միաբաններից չգտնեմ, արտաքուստ աշխարհական ոք նշանակեմ. ես նորան փող կտամ, ասաց:

Խոստովանումեմ, որ է. դասարանի բացման տնօրէնութիւնը մահու չափ վշտալի էր ինձ համար և թէպէտ հակառակէի չէի կարողանում Հայրապետին, բայց սկզբում բացարձակ յայտնեցի ինձ խռովեցնող մտքերս թէ Հոգեւոյս կաթողիկոսին և թէ նորա անունով իշխող անձին:

Վերջապէս ճեմարանի քննութիւններից յետոյ և Արարատի խմբագրութիւնն ևս Սահակ վարդապետին յանձնելուց յետոյ ես թողի Էջմիածին, արտասահման ուղևորելով, տխուր և ցաւալի մտքերով: Երբ Փրանսացիները կարևորութիւն են դրում իրանց ուսանողներին Ձվիցէրա ուղարկել, ամենայն տարի, ուսումն կատարելագործելու, Ձվիցէրացիները կարևորութիւն են դրում իրանց ուսանողներին Գերմանիա ուղարկելու, Անգլիացիները—Փրանսիա ուղարկելու, և այլն, ճեմարանի կառավարութիւնը բաւական էր համարում ազգի ապագայ բանիմաց և անձնանուէր մշակներ պատրաստելու և կատարելագործելու համար Արարատեան դաշտի անապատը, հասարակ ուսուցիչներ ձեռով, միայն թէ նոցա 4,000 և 5,000 ման. անօրինակ ուճիկներ յատկացնելով...

Երևանի նահանգապետից, որն այդ միջոցին  
Չաղկաձորումն էր, ստացայ անցագիրս: Քիֆլիսից  
անցնելով, ճանապարհին Գորի քաղաքում քանի  
մի օր իջևանեցի, որտեղ Հ. Կրեպոր վարդ. Գառ-  
նակերեանի ընկերակցութեամբ 2 օր Յիսնիվալ  
գիւղում անցուցինք նոյն գիւղի պատուարժան քա-  
հանաների հետ: Այնուհետև Բաթումից շոգենա-  
ւով անցայ Սեաւ ծովը, որտեղ շատ անգամ, եր-  
կինքի և անդունդի մէջ լինելով, նորից յանձնվում-  
էի իմ մտածմունքին և հարցնումէի. արդեօք մին-  
չև ե՞րբ հայկական ազգի հոգևոր վարչութիւնն  
ժողովուրդը իւր շահերին պիտի ծառայեցնէ և  
օչինչ անէ ժողովրդի շահերի համար, արդեօք  
մեր եկեղեցական և դպրոցական գործերը մի բա-  
րեվայելի կերպարանք պիտի ստանան, թէ՛ գեւ եր-  
կարօրէն դաստապարտված են այսպէս խառնի-  
խուռն և վայրենի մնալ. . .

Հասայ գեղեցիկ Օդէսսա և 3 օր այնտեղ մնա-  
ցի: Վերջին երեկոցեան 8<sup>1</sup>/<sub>2</sub> ժամին երկաթուղու  
կայարանում տոմսակ գնեցի. „ВЪ ВѢНУ, ВТОРОЙ  
КЛАССЪ“: Ինձ հետ կար ճեմարանի մի աշակերտ  
Քիշնեկից, որին թողի Բազդէլնայեա իջևանում և  
ես շարունակեցի ճանապարհս, միևնոյն տիւրը  
մտքերով և ճեմարանական դասարանների ապար-  
դիւնաւորութիւնները գուշակելով: Հետևեալ օրը  
ճաշից յետոյ 3 ժամին հասանք սահմանադուլս  
Վօլօչիսկ, որտեղ միևնոյն շինութեան մէջ մի  
կողմից ռուսական իջևան է, միւս կողմից ավըս-  
տրիական: Ճանապարհորդներն անցազրերը ժողո-  
վեցին և մենք մնումէինք ռուսական իջևանում,

բայց կարծես թէ զգվումէր, որ ճանապարհի  
հանգամանքները և պայմանները պիտի փոխվին:  
Մանաւանդ ես աւելի շօշափելի կերպով պիտի  
զգայն աչդ, և ահա ընչ պատճառով:

Թիֆլիսում վերցնելով միայն մինչև Վէննա, իմ  
հաշուով, կարևոր համարված փողը, իմ մնացած  
բոլոր գումարը յանձնեցի պ. Մովսէսեանին փո-  
խանցուցանելու Վէննա, որ հասնելուն պէս կարօ-  
ղանամ ստանալ ավստրիական կամ ֆրանսական  
փողով: Երբ հասայ Վօլօչիսկ մնացել էր ընձ մի-  
այն 1 մ. թղթադրամ և մօտ 50 կօպէկ: Բաթումից  
մինչ Օդէսսա շոգենաւի առաջին դասը արժէ  
38 ման., բ. դասը—30 ման., Օդէսսայից մինչև  
Վէննա երկաթուղու բ. դասը արժէ կարծեմ 54  
ման.: Սահմանագլխից 2 իջևան մնացած կամե-  
ցայ մանէթանոց թղթադրամը մանրացնել, որով-  
հետև բաւական մաշված էր: Իջևանում չընդու-  
նեցին մաշված լինելու համար: Մտատանջվել  
սկսեցի թէ երբ Ռուսիայում չեն ընդունում այս  
փողը, ընչպէս կընդունեն արտասահմանում, մինչ-  
գեռ ընձ մնումէր ճանապարհ մինչև Վէննա մի  
գիշեր և հետևեալ օր մինչև 5 ժամ ճաշից յետ:  
Երբ հասանք Վօլօչիսկ, որը կիսով չափ օտար-  
երկրեայ իջևան է, չէի վստահանում այլևս առա-  
ջարկել որ մանէթանոցս մանրացնեն: Մի երկու  
ժամից յետոյ մեզ վերադարձրին անցազրերը և  
անցանք իջևանի միւս—ավստրիական—կողմը: Եր-  
կաթուղին պատրաստվումէր ճանապարհ ընկնելու:  
Ես անփողութեան մտատանջութեան մէջ էի, այդ  
միջոցին անցնումէ մօտովս մի պարոն և ասումէ

գերմաներէն. չէք կամենում արդեօք փող մանրացնել կամ փոխել: Ո՞րտեղ:— Հրամայեցէք: Տարաւ ինձ դրամարկղի մօտ նստած մի պարոնի մօտ: Ասացի որ կամենում եմ մի մանէթանոցն ավտորիական փողի դարձնել, բայց մաշված է Թղթադրամս: Փոյթ չէ, ասաց, տուի և ստացայ ավտորիական մի Փլօրին և քանի մի կրեօցէր մանր փող: Յետոյ տուի իմ ունեցած սպիտակ և սեաւ փող և ստացայ կրեօցէրներ: Դժուար թէ ուրիշ անգամ հազար մանէթ գտնելու համար այնքան ուրախանայի, որքան այն մի Փլօրին և քանի մի կրեօցէրների համար ուրախացայ:

Միայն դժուարանում էի այն միջոցին հասկանալ թէ ի՞նչի Ռուսիայում չփոխեցին ռուսական մաշված Թղթադրամս, իսկ Ավտորիայում ամենայն յօժարութեամբ փոխեցին . . .

Երեկոյեան 6 ժամին մտանք ավտորիական հողք. ճանապարհորդներս նոյն էինք, որովհետև սահմանագլխից ելթեկող չկայ: Իայց ինչ զարմանալի փոփոխութիւն. ամենքը սխեցին օտար լեզուներով խօսել. գերմաներէն, ֆրանսերէն, լեհերէն և այլն: Երկու պարոններ, որոնք բ. դասում էին գալիս, գ. դաս անցան, (երևի տոմսակները մինչև սահմանագլուխ էին գնել): Եվրօպայում գ. դասը բաւական վայելուչ տեղ է, որ երբէք համեմատել չէ կարելի ռուսական երկաթուղիների գ. դասի հետ, և այնպիսի բարեվայել կերպով են վարվում ճանապարհորդները գ. դասում, որ շատ անգամ ռուսական բ. դասում աւելի անվայել երևոյթներ են լինում: Պաշտօնեաները հիանալի քաղաքավարութեամբ

են վարվում: Ճանապարհին մի իջևանից մի սպայ (օՓիցէր) մտաւ մեր օթեակի (վագօն). սիրելի քաղաքավարութեամբ. «սատիւունիմ ձեզ ողջունելու» ստաց մեզ: Նոյնպէս փոխվեցաւ և բոլոր բնութիւնը, գեղեցիկ դալար խոտ ծածկումէր դետինը: Երևականների կովեր և ձիեր այնպէս լցված և սիրուն էին, կարծես նոցա յատկապէս ցոյց տալու համար են պահել: Սկսմայ միտքս էր ընկնում Եչէդրինի հիանալի Յа рудежемъ (Սահմանից դուրս) երկասիրութիւնը, որ բովանդակումէ այնքան ճշմարտութիւն, այնքան սրամտութիւն, այնքան իմաստ, այնքան կեանք: Նոյնիսկ գրքի սկզբում ռուս և գերմանացի տղաների անունները և լսօսակցութիւնը արդէն երկու ամբողջ կեանքի սրամիտ նկարագիր է:

Բայց կարծես մոռացայ, որ իմ նպատակս եվրօպական դպրոցների հետ ծանօթացնելն է, և ոչ թէ հաճոյական կամ անհաճոյ մանրամասնելով ճանապարհորդութիւն գրել: Արեւմն հեռեւեալ՝ օրը ճաշից յետոյ 5 ժամին մտանք Սիստրիայի մայրաքաղաքի, սիրուն Վէննայի արեւելեան հոյակապ կայարան: Գնացի հիւրանոց, որտեղից միւս օր տեղափոխվեցայ Պէստալոցցի Գասսէ, մի բարօճուհու բնակարանում սենեակի վարձելով, օրը մի Փլօրին:

Ես պիտի պատմեմ գլխաւորապէս փողովըդական այսինքն սկզբնական դպրոցների և սկզբնական մանկավարժանոցների մասին, որոնք ամենուրեք սոցգային լուսաւորութեան հիմն են և առանձին հոգացողութեան առարկայ: Ի. Օ. Վ. Ս.

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ.

—Միշտ և ամեն անգ ասումեն. ուսուցչի պաշտօնը ծանր է, միևնոյն ժամանակ ասելու է, որ ուսուցչի նպատակը բարձր է: Ուսուցչի և բժշկի պաշտօնները նման են. հոգեկան և մարմնական առողջութիւն: Մին բժշկումէ հոգի, միւսը—մարմին: Բայց հանգամանքները հակադիր են. մարմինը հիւանդ է, երբ աւելի տաքութիւն ունի, հոգու մեծ հիւանդութիւնը ցուրտն է, սառնութիւնն է: (Առաջ մեր մէջ ևս, ինչպէս այժմ քաղաքակրթիւթւած աւետարանական եվրօպայում ուսուցիչ և հոգևորականը համանիշ բառեր էին, ըստ նմանութեան մեծ Ուսուցչի, այժմ մեր մէջ հոգևորականներս դադարած ենք մտքի խնդիրներով զբաղել: Այս պատճառով մեր մէջ մտքի կամ մարմնի բժիշկն այժմ ուսուցիչն է համարվում): Ուրեմն եթէ բժիշկը սառն պիտի լինի, բժշկութիւնը յաջողեցնելու համար, ուսուցիչը միևնոյն նպատակով ջերմ, եռանդուն պիտի լինի, <sup>անբարորդ աշխարհում:</sup> Այս պայմանով միայն նա կհասնէ իւր Բարբոն նպատակին. փոյթ չէ եթէ երբեմն կսայթաքէ: Միևնոյն է թէ մեծ ստրի վերա են բարձրանում, ծանր զնալով, կանգ առնելով, գանադան արկածներով և անկմամբ, ժայռերին հանդիպելով: Փոյթ չէ. թոյլերին օգնողներ կհասնեն, վերաւորվածներին բարձրացնողներ կգտնվին և վերջապէս կբարձրանան: Այսինքն թէ ինչ որ կլինի ազգը 50 տարուց չետոյ, 100 տարուց չետոյ, նա հետեւանք կլինի ուսուցչի շարունակ և անդադար աշ-

խատելու: Անաղ, իւր էր թէ մեր ուսուցիչները այս համոզմամբ թափանցիվէին, այս ճշմարտութիւնն իրանց մարմին և արիւն դարձնէին, և այնպէս աշխատէին:

---

Սոյն այս մտքով է որ ժիւլ Սեմօն իւր École (Դպրոց) գրքում այս խօսքն ասաց. „Le peuple, qui a les meilleures écoles, est le premier peuple; s'il ne l'est aujourd'hui, il le sera demain“: (Այն ժողովուրդն, ով լաւագոյն դպրոցներ ունի, առաջին ժողովուրդ է: Եթէ այդպէս չէ այսօր, այդպէս կլինի վաղիւ):

---

Ուսուցչին իւր ծանր սրտածնունք գլխաւոր քաջալերողն, իւր բարձր նպատակին հասնելում գլխաւոր նպաստողն, իւր շարունակ ընթերցանութիւնն է, իւր ընկեր—պարբերաթերթն է: Այսպէս է մտածում ամենայն քաղաքակրթված, լուսամիտ և նպատակաւոր ուսուցիչը: Աստի ընդարձակ է լուսաւորված աշխարհի մանկավարժական գրականութիւնը և բազմաթիւ են մանկավարժական պարբերաթերթերը: Մենք առաջ կբերենք նոյանից գլխաւորներ և առաւել արժանաւորներ:

---

Ֆրանսերէն լեզուով հրատարակվում են հետեւեալ նշանաւոր թերթերը.

La Revue Internationale de l'Enseignement (Ուսման Մեջազգային Հանդէս): Փարիզի բարձր մանկա-

վարժանոցի պրոֆէսորները կիսամսեայ թերթ:  
Revue Pédagogique, (Մանկավարժական Հանդէս).  
Փարիզի մանկավարժական թանգարանի (Musée  
pédagogique) ամսագիր է:

Manuel général de l'instruction primaire (Սկզբնա-  
կան ուսման ընդհանուր ձեռնարկ): Փարիզի Աշէս  
(Hachette) գրավաճառանոցի հրատարակած շարա-  
թաթերթ է: Խմբագրողն է Շ. Գըֆօդօն:

Journal des Instituteurs (Ուսուցիչները օրագիր):  
Գիւլօն (Dupont) գրավաճառանոցի շարաթաթերթ  
է Փարիզում:

L'instruction primaire, journal d'éducation pratique  
(Սկզբնական ուսումն, գործնական կրթութեան  
օրագիր): Բըլէն (Belin) գրավաճառի շարաթա-  
թերթ է, Փարիզի մանկավարժանոցի վերատեսչը  
— Ա. Լընիանի (A. Lenient) խմբագրութեամբ:

Կաթօլիկական հոգևոր դպրոցների թարգման-  
ներն են, Ecole libre (Ազատ դպրոց) և Ecole primaire  
(Սկզբնական դպրոց) շարաթաթերթերը Փարիզում:

Ֆրանսիայի մանկավարժական պարբերաթերթ-  
երէց առաւել ընտիր և յուսամիտ են Revue Pé-  
dagogique ամսագիրը և Revue Internationale կիսամ-  
սագիրը:

---

Ֆրանսական մանկավարժական հրատարակու-  
թիւնների թուում պէտք չէ երբէք մոռանալ Dic-  
tionnaire de Pédagogie (Մանկավարժութեան Բա-  
ռարան) անունով հիանալի և աննման երկտալ-  
րութիւնը, որ նոյնպէս պարբերաբար է հրատա-

յակվում Փարիզում, Մանկավարժանոցիս ընթերցող-ներին արդէն յատնել բազմարդիւն պ. Երեւոսնի խմբագրութեամբ, Այս Հոյակապ գործին աշխատակցումեն Պրանսիայի բոլոր անուանի լուսամիտ մանկավարժներ և գիտնականներ: Ամեն ամիս, 1878 թ. փետրվարից սկսած, հրատարակվումէ երկու մեծադիր տետրակ, իւրաքանչիւրն երկու թերթից (32 երեսից) բաղկացած, տետրակի գինը կէս Փրանկ է: Ընդ ամենն պետի հրատարակիլ մօտ 150 տետրակ:

Այժմ վաճառվումէ Աշտի գրավաճառանոցում (Librairie Hachette et C<sup>ie</sup>, Boulevard Saint Germain, 79, Paris) Մանկավարժութեան Բառարանի առաջին մասի 109 տետրակ, իւրաքանչիւրը կէս Փրանկով, և ամբողջ երկրորդ մասի երկու հատորներ:

Ա. հատորը A տառից ց H տառը, 100 երես, արժէ 15 Փրանկ (ուս. թղթագրամով պէտքէ ուղարկել 6 մանէթ):

Բ. հատորը J տառից ց Z տառը, յաւելումով 1500 երես, արժէ 23 Փրանկ (9 մանէթ 20 կօպէկ):

Պրանսական Զվիցէրան ունի իւր նշանաւոր օրագիրը L'Edicateur revue pédagogique (Դաստիարակ, մանկավարժական հանդէս) անունով: Պրանսական կամ քօմանական Զվիցէրայի ուսուցիչները ընկերութեան կիսամասութերթ է, Նեօշատէլ քաղաքի ճեմարանի մեծանուն մանկավարժի և պրօֆէսօրի—Ա. Դագէի (Dr A. Daguët) խմբագրութեամբ: Նախ հրատարակվումէր Նեօշատէլում, այս տարի հրատարակվումէ ժընէվում: Պ. Դագէ, բացի ուրիշ հեղինակութիւններէ, շատ ընտիր, «Մանկավար-

ժուլթեան ձեռնարկ» ունի յօրինած, որը 4-դ տպագրութեամբ հրատարակվեցաւ անցեալ տարի: Խտակերէն ևս թարգմանված է:

Ecole (Պարոց) փոքրիկ ամսագիրը հրատարակում է Իմէր (Imer) գրավաճառը Զվիցէրայի Լօզան քաղաքում:

Բէլժիքի նշանաւոր մանկավարժական հրատարակութիւնները սոքա են.

L'Abeille, Revue Pédagogique (Մեղու, մանկավարժական հանդէս), Բէլժիքի բոլոր մանկավարժանոցների վերատեսուչ, բազմաշխատ և յայտնի մանկավարժ Թ. Բրաուն (Th. Braun) է խմբագրապետ և ինքն է հրատարակում այս ամսագիրը 30 տարուց ի վեր Բրիւսէլում: Պ. Բրաունը շատ արդիւնաւոր մանկավարժ է և բազմաթիւ երկասիրութիւններ ունի, որոնց անունները ուրիշ անգամ կ'հրատարակենք:

Avenir, revue pédagogique (Ապագայ, մանկավարժական հանդէս), Բրիւսէլի արական մանկավարժանոցի ուսուցիչների շարաթաթերթ է:

Ecole normale (Մանկավարժանոց) փոքրիկ եռամսեայ թերթ է: Պրզեօ գիւղաքաղաքի (Նեօշատէլի մօտ) աւետարանական մանկավարժանոցի ուսումնաւոր աշակերտների թարգման է, նոյն մանկավարժանոցի վերատեսչի—Ժ. Պարօի խմբագրապետութեամբ: Պ. Պարօն յայտնի մանկավարժ է և նորա յօրինած Histoire universelle de la Pédagogie (Ընդհանուր մանկավարժութեան պատմութիւն)

չատ յարգելի է ամեն բանիմաց մանկավարժների աչքում: Ռուսերէն ևս թարգմանված է:

Գերմաներէն Հրատարակիւմեն Գերմանիայում և Աւստրիայում բողոքական մանկավարժական և դպրոցական միամսեայ, երկամսեայ և եռամսեայ թերթեր: Ամենանշանաւորները միայն կյիշենք:

Ամենահներից մին է Rheinische Blätter für Erziehung und Unterricht, (Րէյնական թերթեր կրթութեան և ուսման համար), որը ունեցած է իւր ազդեցութեան օրեր և, թէպէտ փոքր ինչ ընկած է այժմ, արժանի է ուշադրութեան: Այս թերթը հիմնած է 1827 թ. Դիստէրվէզը—ազատամտութեան համարձակ և վեհանձն տխոյեանը: Այսօր նորա հրատարակութիւնը շարունակում է Գրանի-Փուրցում դօկ. Վիխարդ Լանգէ, Համբուրգից, Պ. Լանգէ հրատարակած է մանկավարժութեան շատ հետաքրքիր և օգտաւէտ պատմութիւն, որ նա յօրինած է Շմիդտի յայտնի գրքի համաձայն: «Րէյնիշէ Բլէտտէր» հրատարակիւմեն երկու ամիս մի անգամ:

Paedagogische Blätter für Lehrerbildung und Lehrerbildungsanstalten (Մանկավարժական թերթեր ուսուցիչների և մանկավարժանոցների համար) հրատարակում է յայտնի մանկավարժ—Դօկ. Կէռ (Kher), որը մինչև այժմ Հալբէրշտատի մանկավարժանոցի վերատեսուչ էր, իսկ այժմ էրՓուրտի մանկավարժանոցի վերատեսուչ դարձաւ: Պէդագոգիշէ Բլէտտէր հրատարակիւմեն Գօթայում

ամեն երկու ամիս մի անգամ: Ինչպէս որ ցոյց է տալիս նոյնիսկ անունը, Պէդագոգիչէ Բլէտտէրը զբաղած է մասնաւորապէս մանկավարժանոցներէ ուսուցման խնդիրներով և բովանդակումէ մեծագոյն մասամբ աւելի փորձնական աշխատութիւններ քան թէ տեսական տեղեկութիւններ: Խմբագրող պ. Վէոբ գիտուն և հռչակված անձն է, և հրատարակած է շատ յարգելի, շատ հիմնաւոր և շատ գիտնական աշխատութիւն ժողովրդական ուսուցման ճիւղերի պատմութեան վերա Գերմանիայում:

Թէպէտ համեմատաբար նոր է, բայց պատուաւոր տեղ է բռնում դօկ. Ֆ. Գիտտէսի (Fr. Dittes) (Վէլննա և Լէյպցիլ) հրատարակած Paedagogium (Մանկավարժանոց) ամսագիրը, որը մշակումէ կըրթութեան և ուսուցման խնդիրները: Պէդագոգիումը ամենանշանաւոր թերթերից մին է, եթէ ոչ մեծութեամբ, գոնէ խմբագրողի հեղինակութեամբ և եռանդով: Պ. Գիտտէսը Պէդագոգիում հիմնեց 1878 թ. սեպտեմբերին և պաշտպանեց և դեռևս պաշտպանումէ Վէլննայում ազատամտութեան դատը: Պ. Գիտտէսին 1868 թ. հրաւիրեց Վէլննայի այն ժամին ազատամիտ քաղաքային վարչութիւնը վերատեսչական պաշտօնը յանձն առնելու քաղաքի ուսուցչական սէմինարիօնում, որ և կոչվեցաւ Paedagogium—Մանկավարժանոց, և ամսագիրն ևս նոյն անուն ստացաւ 1878 թ.:

Բայց 1881 թ. նա ստիպվեցաւ թողնել իւր պաշտօնը, ինչպէս երբեմն ստիպվեցաւ անել Գիտտէսը/էզը Բէռլինում 1847 թ.: Պէդագոգիումի

6-դ տարին պ. Ռիստօսը սկսում է մի յօդուածով, որով յայտնում է, թէ ինքն վհատած չէ և, չնայելով հանգիստ դժուարութիւններին, չէ կամենում յաղթանակող յետադէմ (կաթօլիքական) կուսակցութիւնը ուրախացնել, դադարեցնելով իւր ամսագիրը, որի գոյութիւնը վերաւորում է և անհանգիստ է անում հակառակորդներին: Նա հրաւիրում է ամենքին թէ սկզբնական դպրոցի ուսուցչին, թէ գիմնազիօնի ուսուցչին, թէ համալսարանի պրօֆէսորին հետամուտ լինել ամեն բանին, ինչ որ ուսուցման կլիբրաբերվի: Մանկավարժութիւնը վսեմ գիտութիւն է. այսօր այլևս նորան ստեղծելու չէ, նա կայ, Պէտք է նորան յարգել, հասկանալ, զարգացնել, քարոզել, յարմարեցնել: Սորա համար հարկաւոր է, նախ և միւս ամենայն գործից առաջ, ուսուցչական դասը, որ ճանաչէր իւր կոչման բարձրութիւնը: Ուսուցչին է ամենագլխաւոր և ամենանշանաւոր գործօն ազգային լուսաւորութեան իմաստուն սխտէմունք: Առանց բանիմաց ուսուցչական դասի, օրէնքները, դպրոցական վարչութիւնները, դպրոցի շքեղ շէնութիւնները, եղանակները, սխտէմներ, ձեռնարկներ, շրջաբերականներ ոչ այլ ինչ են, եթէ ոչ—ունայն կազմութիւն և անօգուտ շուայութիւն:»

— „Neue Blätter aus Sudddeutschland für Erziehung und Unterricht (Հարաւային Գերմանիայի նոր թերթեր կրթութեան և ուսուցման համար) անունով ամսագիրը հրատարակվում է դօկ. Բուրկի և Գ. Պֆիստէրէրի (Burk und Pfisterer) խմբագրութեամբ, Շտուտգարտում: Այս եռամսեայ թերթի ուղղութիւնն

աւելի համալրական է եկեղեցուն, հրատարակվելու լով աւետարանական աստուածաբանների և եկեղեցականների ազդեցութեան ներքոյ: Neue Blätter յատկապէս Վիւրտէմբէրգի դպրոցների թարգման է:

Պրուսիայի ազգային լուսաւորութեան նախարարութիւնը ամեն ամիս հրատարակում է պաշտօնական թերթ Centralblatt für die gesammte Unterrichts-Verwaltung (Կենդրոնաթերթ լուսաւորութեան ամբողջ վարչութեան համար), որտեղ տպվում են նախարարական թղթեր, շրջաբերականներ, պրօգրամներ, կանոններ, գեկուցմունք, վիճակագրութիւններ, պաշտօնեաների փոփոխութիւններ:

Մասնագիտական (բէալական) ուսումն Գերմանայում և Աւստրիայում նշանաւոր տեղ բռնելով, իւր յատուկ թարգմաններ ունի: Բէռլինում հրատարակվում է Central-Organ für die Interessen des Realschulwesens (Կենդրոնական թարգման բէալական ուսման շահերի համար), պ. պ. Ֆրէյտագի և Բեօտգէրի (Freitag und Boetger) խմբագրութեամբ, մատենախօսական ընդարձակ և հրահանգէչ բաժնով:

Հէրբարտեան դպրոցի գլխաւոր ներկայացուցիչներից ոմանք հրատարակում են շարաթաթերթ Deutsche Blätter für erziehenden Unterricht (Գերմանական թերթեր կրթողական ուսման համար) անուևով Լանգէնզալցայի մէջ (Langensalza), Ֆր. Մաննի (Mann) խմբագրութեամբ: Լէյպցիի քաղաքում հրատարակվում է Allgemeine deutsche Lehrerzeitung (Ընդհանուր գերմանական ուսուցչական լրագիր) 35 ամեայ շարաթաթերթը պ. Կլէյնէրտե (Kleinert) խմբագրութեամբ, Գրէզգէնից, Բէռլինի

ուսուցչական ընկերութիւնը իւր առանձին թարգման ունի Paedagogische Zeitung, (Մանկավարժական լրագիր) անունով ազատամիտ շարաթաթերթը:

Ավստրիայի մայրաքաղաքում—Վէննայում Պիխլէր (Pichler) գրավաճառանոցը 3 պարբերաթերթեր է հրատարակում. 1) Freie Paedagogische Blätter (Ազատ Մանկավարժական Թերթեր), պ. Եսսէնի (Jessen) խմբագրութեամբ, Այս շարաթաթերթը 17 տարումն է: 2) Oesterreichische Schulbote (Ավստրիական դպրոցական Աւետարեթ) հրատարակում է պ. Ֆրիչի (Frich) խմբագրութեամբ, Կլազէնֆուրտից, ամիսը երկու անգամ, 33 տարումն է: 3) Ֆրեորէլեան ընկերութեան (Deutscher Foebel-Verband) թարգման է Kindergarten (Մանկական Պարտէզ) ամսագիրը, որը հրատարակում է 24 տարի, ներկայումս պ. Ֆր. Չէյդէլի (Seidel) խմբագրութեամբ, Վէյմարից:

Ավստրիայի ընդհանուր ուսման գլխաւոր թարգման է Zeitschrift für das Realschulwesen (Ընդհանուր ուսման Օրագիր) և հրատարակում է Վէննայում Երեք պրոֆէսորները—Կոլբէի, Բէխտէլի և Կուլնի (Kolbe, Bechtel und Kuhn)—խմբագրութեամբ: Այս ամսագիրը բովանդակում է գրեթէ միայն մատենատիպիական, բնագիտական, բնալուծական, տէքնիկական և այլն յօդուածներ: Ունի նոյնպէս ընդարձակ և հրահանգիչ մատենախօսական բաժին:

Գերմանական Զվիցերան իւր մանկավարժական թերթեր ունի: Schweizerische Lehrerzeitung (Զվիցերական ուսուցչական լրագիր) շաբաթաթերթը գերմանական Զվիցերայի ուսուցչական ընկերութեան թարգման է, և հրատարակվում է դօկ. Վ. Էտշտէյնի (Wettstein) — Կիւսնախտի մանկավարժանոցի վերատեսչի խմբագրութեամբ, Յիւրիխում: Schweizerisches Schularchiw (Զվիցերական դպրոցական պահեստ) Յիւրիխի դպրոցական թանգարանի թարգման ամսագիր է, և հրատարակվում է դօկ. Օ. Հունցիկէրի (Humziker) — Կիւսնախտի մանկավարժանոցի պրօֆէսորի խմբագրութեամբ: Praxis der schweizerischen Volks und Mittelschule (Զվիցերական սկզբնական և միջնակարգ դպրոցի գործադրութիւն) հրատարակվում է Յիւրիխում, տարին չորս անգամ, ուսուցիչ պ. Բիւլմանի (Bühlmann) խմբագրութեամբ, Լյուցէրն քաղաքից:

— Մանկավարժանոցի բոլորանուէր ամենասրտեւանդն փափագը հայկական դպրոցներին բարեկարգութիւնն է, և ամենից առաջ ամեն կողմից գէշ դարձած և թշուառացած Գ. Ճեմարանին, ուստի Մանկավարժանոցը կփափագէր ուսումնասէր, արդարասէր և գործունեայ Հայրապետ: Եւ ահա լցված սրտով և կատարեալ ուրախութեամբ սրտատրոփ տինկալոզներս իմացանք, որ Կ. Պօլսի անգղալին ժողովը իւր խորախորհուրդ իմաստութեամբ, արժանաւոր և պատկառելի քուէարկութեամբ հրատարակեց Հայրապետական զահէն արժանաւոր

անձներ. Արքայան Ներսէս պատրիարքին (62 ճայնով), սրբ. Խրիմեան Հայրիկին (50 ճայնով) և սրբ. Մելքիսեդեկ եպիսկոպոսին (42 ճայնով):

Միևնոյն ժամանակ մխիթարված ենք, որ ազգային ժողովը իմաստնօրէն հեռացրեց կնճիւր:

Ամբողջ ուղտաբնակ Հայերը, հոգելոյս Գէորգ դ. Հայրապետի մահից յետոյ անմիջապէս, իրանց աչքերը առ Սրբ. Ներսէս յառեցին: Անհնարին էր գգայուն սրտի համար առանց աչքերից արտասուք ցայտելու կարգալ, պատգամաւորները ընտրութիւնները միջոցին, այն ոգևորված, մի սիրտ մի հոգի դարձած Հայերի միահամուռ և միաբերան աղաղակներ թէ Ներսէսին, միայն Ներսէսին կցանկանք հայրապետական գահի վերա:

Այսպիսի ընդարձակագոյն, անպայման ժողովրդականութիւն վաստակել մի անձի կողմից դեռ ևս ոչ թէ տեսած, լսած չենք և մեր մօտ պատմութեան մէջ ևս չենք յիշում, բայց երջանկալիշատակ Ներսէս Ն-ից, որը ձեռք էր բերել ընդհանուր ժողովրդականութիւնը և համակրութիւնը, ուստի միևնոյն փառագով և համակրութեամբ կաթողիկոս ընտրվեցաւ ազգից: Ամբողջ Ռուսիայում ոչ միայն մեծ քաղաքներից և գիւղաքաղաքներից, այլև դիւղերից և խորշերից անգամ ամենքը միաբերան աղաղակումին «Ներսէս, Ներսէս, և դարձեալ Ներսէս»: Ամենայն մտածող Հայի համար շատ և անչափ շատ մխիթարական է այս համակրութիւնն և ժողովրդականութիւնը: Սա ցոյց է տալիս թէ Հայերն ևս կարող են գնահատելու յատկութիւն ձեռք բերել, որպիսի յատ-

կութիւնը մի ազգի կենդանութեան համար մեծ նշանակութիւն ունի, և որից զուրկ են եղել Հայերը, սակաւիկ բացառութեամբ:

Եւ այս ընդհանուր համակրութիւնն և ժողովրդականութիւնը վայելումէ այն անձն, որն ամենից շատ աշխատել է թիւրքիարնակ ծանրաբեռնված և աշխատեցեալ Հայերի բարօրութեան համար: Եւ ամենայն Հայերն նորան են ցանկանում Հայրապետ ունենալ, մտածելով, արդար և իրաւ, թէ նա պիտի կարօղանայ Հայերի եկեղեցական և ուսումնարանական գործերի համար արդիւնեւորապէս աշխատել և բարոյապէս սնուցանել իւր ժողովուրդն ի վայրի դալարւոյ և առ ջուրս հանգստեան:

Փառք Քեզ, Աստուած, փառք Քեզ, որ Հայերն ևս կամենում են բանականօրէն, կանոնաւորապէս և լուսամտարար զգալ, մտածել և գործել:

Սրբ. Ներսէսին կաթողիկոս ընտրելն այնքան ընտրվածին չէ պատիւ, որքան ընտրող ազգին, մարդկութեան, արդարութեան և իմաստութեան առաջ:

Էջմիածինն է, որ այսօր խիստ պէտք ունի Սրբ. Ներսէսի, որ սա իւր գործունէութեան և ժողովրդականութեան ջերմութեամբ տաքացնէ, հալեցնէ հայկական կրօնի Սրբավայրին—Էջմիածինն պատած սառույցները:

Ներսէս պատրիարքը գործօն է և անդադար լուսամտար գործօն, սորա հետ գերօրինակ ժողովրդականութիւն վաստակած գործօն: Իսկ այս հիանալի ժողովրդականութիւնն անհրաժեշտ կա-

ընդր է ոչ թէ Սրբ. Ներսէսի Համար, որ արդէն  
ունի, այլ մեզ Համար, մեր թշուառ, խառնիխուռն  
և վայրենի ընկած Հոգևոր կեանքը բարձրացնելու  
և բարեօրէիլու Համար, Հայկական ազգի միու-  
թիւնը պահպանելու, և Հայ դպրոցներին կեանք  
տալու Համար, ի հարկէ նոյնինքն ժողովրդի կա-  
մեցողութեամբ և ձեռնտուութեամբ:

---

Շնորհակալութեամբ ստացանք մեծ. պ. Արմե-  
նակ Սրենու «Կաթողիկոսական Ընտրելիներ» գրք-  
քոյկը: Լուսատենչիկ պարոնի միակ կաթողիկո-  
սացու սրբ. Մելքիսեդեկ Մուրադեանն է: Գրքոյկի  
գինը 15 կօպ. է, տպված է Թիֆլիսում Կրամա-  
բէնկօի տպարանում:

---

Առաջին տետրի բանաստեղծութեան մէջ երրորդ  
տողում սխալմամբ շարված է մ ե ը գերանունը:

---

Խմբագրող-հրատարակող ԽՈՐԷՆ Մ. ՎԱՐԴ. ՍՏԵՓԱՆԷ:

---

Дозволено ценз. Тифлисъ, 29 Апрелья 1884 г.  
Типографія И. Мартиросіана, Орб. ул. д. № 5.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ:


Թ Լ Ք Լ Ե Ս, Աւուլցիին, Ենորհակալութիւն, Մեր անմխիթար շրջանում համակրութիւնը քաջալերութիւն է: Պրօգրամները հաւանումէք և մխիթարվումէք որ վերջապէս համակարգ պրօգրամների առաջին փորձ երևեցաւ հայկական գրականութեան մէջ ևս: Ուրախ ենք: Կամենումէք քննադատութեանն ենթարկել, առաւել ուրախ ենք: Ի նկատի ունենալով մեր հանգամանքները, մենք հիտեւել ենք եվրօպական մանկավարժներէ և դպրոցագէտների ցուցմունքին: Բայց և այնպէս մեր պրօգրամները կարօղ են թերութիւննեց ունենալ, մենք կատարել ենք միայն մեր պարտքը մերօրսանն: Այս, շատ մեծ և առաջին նշանակութիւն կրօծին ենք տալիս, ոչ թէ մօլեռանդութեամբ, այլ նոյնիսկ մանկավարժական տեսակետից: Արդարև յոյն—հռոմէական կրթութենից ներկայումս ևս ունինք քաղելու բազմաթիւ լաւ օրինակներ և օգտաւէտ աւանդութիւններ. սէք առ հայրենիք, յարգանք առ օրէնք, հասարակական պարտաճանաչութեան զգացումն, Բայց առաջադիմութեան ճշմարիտ զաղափարներն աշխարհին աւանդեց միմիայն քրիստոնէութիւնը: Քրիստոնէութիւնը հաւասարութեան և ընդհանուր եզրայրութեան քարոզութեամբ, կնօջ ազնիւ աւնունը վերականգնելով, իւր բարոյագիտութեան մաքրութեամբ, շատ նպաստեց մարդկային անձնաւորութեան գաղափարը և քաղաքակրթութեան կատարելատիպը (ideal) բարձրացնելուն: Այլև հայ-

կական եկեղեցին այսօր աշխարհումս ցերուցան եղած հայ մարդի հայրենիքն է. արդեան ծանկա- վարթութեան մէջ ևս հայրենագիտութիւնը առա- ջին տեղ է բռնում:

Ձեր առաջարկած հարցմունքն վերաբերմամբ այս անդամ այսքան:

Ս. ի ա լ ց ի ա Յ, Կ. Մ. Գուք Հաւանել էք պատ- մութեան պրօգրամը և Ձեր թեմական վերատե- սուչն ևս հակառակ չէ Ձեր ընտրած եղանակին: Այդ լաւ է: Կարող էք բերել սալ Լանգլի պատկերներ Վէննայից, այս հասցեով. Wien bei Hölzel, խնդրե- լով ուղարկել Ձեզ Bilder zur Geschichte v. Langl: Շպիտի և Բէռլինի պատմութիւնը կարելի է նոյն Հեօյցէլ գրավաճառից բերել սալ Վէննայից, օրինակելով նախագծից գերմաներէն վերնագրեր: Գինը չգիտենք: Առաւել յարժար կլինի, որ դպրոցիդ հոգաբարձութիւնը նամակ գրէ գրա- վաճառին (Փրանսերէն, եթէ գերմաներէն իմա- ցող չկայ), խնդրելով ուղարկել թէ չբերը և թէ հաշիւը: Եոցա հաշուում գոնեք գուրդէնով կլինին նշանակված: Գուք կարող էք ուսսական թղթա- դրամ ուղարկել, եւրաքանչիւր գուրդէն կամ Փլորին 80 կօպ. հաշուելով: Եթէ այդ հեռու կերևի, հոգաբարձութիւնդ կամ դուք կարող էք գրիմել Պէտէրբուրգ Խեկիէք գրավաճառի միջնոր- դութեանը այս հանցեով. Петербургъ. Книж- ный магазинъ Карла Риккера. Невскій Проспектъ № 14: Այս անապարհով փոքր ինչ աւելի թանկ կ'նստէ:

Օղտեաննիկովի դասագրքը կարող էք բերել սալ Պէտէրբուրգից, գրիմելով. Въ книжный мага- зинъ бывшій Исакова. գինը երանք կ'նշանակեն:



Մանկավարժանոց ամսագիրը հրատարակվում է 1884 թ. յունվար ամսից, գլխավորապես մանկավարժական ուղղութեամբ: Ամսական տետրն երկու թերթից է, տարին կլինի 10 տետր (յուլիս և օգոստոս ամիսներում չի հրատարակվի):

Մանկավարժանոցի տարեկան գինն է 3 մանէթ:

Հրատիրութեան մասձօղ, դպրոցանուէր հաշույն ուսուցիչներն աջակցելու Մանկավարժանոցին իրանց բաժանորդագրութեամբ և աշխատակցութեամբ: Ստորագրվողները լատիապէս պիտի գիտեն այս հասցեով. Св. Ечмядзинь. Редакция Манкаваржаноць.

Խմբագրող-հրատարակող ԽՈՐԷՆ Շ. ՎԱՐԴ. ՍՏԵՓԱՆԷ:

Համակերտական Պրոգրամներ (ստալին փորձ) աշակերտական կանոններով և դասախարակների հրահանգներով հայկական հոգևոր ծխական և միջնակարգ դպրոցների համար զանազան ման թիֆլիսում կենդրոնական գրախաձուռանոցում (Центральный Книжный магазин) և Ջաբ. Գրեգորեանի կովկասեան Գրախաձուռանոցում (Кавказская Книжная торговля Э. Грякурова): Գրքոյի գինն է 50 կ. Մանկավարժանոցի բաժանորդները ստանում են պրոգրամների գրքոյին ամսագրի յունվարի և փետրվարի տետրների փոխարէն:

Մեզ խնդրում են ծանուցանել հետևեալը. «Արքեբնանի հայկական հոգևոր դպրոցի ուսուցիչ Ք. Պալեանը կազմում է թուարանութեան ձեռնարկ ծխական և միջնակարգ դպրոցների ուսուցիչներին համար, փոխադրութեամբ, Եվտուշէվսկու մեասոզով և շուտով պատրաստ կը լինի ապագրութեան համար»:

